

3778

281.6
h-74

1893

PP200P

2010

ԹՈՒՂԹ ՀՈՎՀՈՒԱԿԱՆ

ԱՐ ՄԵՐԱՋՆԵԱՅ ԲՆԱԿԵԱԼՍ

ԴՐԱ ՄԱՆՉԱԽԹՐ ԵՎ ԴՐ ՇՐՋԱԿԱԾՍ

ԶՈՐ Ա. Ռ. Ա. Ք է

ԹՈՐՈՍ ՔԱՀԱՆԱՅ ՏԵՐ ԻՍԱՀԱԿԵԱՆ

(ԶՈՒՂԱՅԵցի) Ա. Ա.

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ ՀԱՅՈՑ ՄԱՆՁԵՍԹՐԻ



ՄԱՆՉԱԽԹՐ

1899

281.6
S-37

281.6
Ա-74

ԱԿ

ԹՈՒՂԹ ՀՈՎՈՒՄԿԱՆ

ԱՌ ՄԵՐԱՋՆԵԱՅՍ ԲՆԱԿԵԱԼՍ

Դ ՄԱՆՏԻԱՍԹԻ ԵԽ Դ ՃՐՁԱԿԱՑԱ

Զ Ո Ր Ա Ա Ա Ք Ե

ԹՈՐՈՍ ՔԱՀԱՆԱՅ ՏԵՐ ԻՍԱՀԱԿԵԱՆ

(Զուղայեցի) Ա. Ա.

Հ Ո Գ Ե Խ Ո Ր Հ Ո Վ Ե Խ Հ Ա Ց Ո Ց Մ Ա Ն Ձ Է Ս Ե Ր Ի



ԱԿ

Մ Ա Ն Ձ Է Ս Ե Ր

1899

Թուղթ Հովուական

Ա. ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՈՐՔ ԸՆԴ ՀՈՎԱՆԵԱՔ

Ա. ՀՈԳԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՅՈՑ

Ի ՄԱՆՉԵՍԹ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՄԿՐՏՉԻ

Մրբազնագոյն Կաքուղիկոսի

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ



3507
40

Սիրեցեալիդ իմ 'ի Քրիստու,

Ճիշդ երեք տարւով յառաջ, Քրիստոի Համբարձման Տօնիմ՝ արժանացայ իմ առաջին Ս. Պատարագի մատուցանել Հայաստանեայց Եկեղեցւոյ ամենէն առիրական Տաճարի մէջ — Ս. Էջմիածնի Խցման Սեղանի վրայ — ի ներկայութեան Ազգիս Վեհ. Հայրապետին եւ Մայր Արքույ օրհնեալ Միաբանութեան :

Դոհութեամբ կը յիշեմ այդ շնորհարեր օրն, որ անմոռանալի պիտի մնայ ինձ մինչեւ ցվախման կենաց ինոց, յորում առաջին անգամ կոյուեցայ իրեւ հայր Ժողովրդեան՝ սիրեցեալ հեռաւոր հօսիս մաղրանքներ 'ի յերկինս վերառափել այն սուրբ վայրէն՝ ուր մեր Լուսաւորիչն իր երկնաւոր օժումն ընկալաւ, եւ յաջորդեց Մրբազն Առաքելոցն Թաղէոսի եւ Բարբորիմենոսի :

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երեք տարիներ անցան յումէ հետէ դուք զիս ընտեղիք իբ-
րև ձեր հոգեւոր նովիս . Եւ մինչ մի ակնարկ կը ձգեմ այդ
անցեալ ժամանակի վերայ, սիրս ուրախութեամբ կը լցուի
Եւ ոչ այլ ինչ բայց երէ խորին գոհունակութիւն կըզգամ :

Զեր մէջ անցուցած նորընծայութեանս միջոցին շատ բա-
ներ ուսայ . ՚ի մանկութենէ ՚ի վեր ուսումնասիրած Տեսական
Աստուածաբանութեան Գործնական Տարերքը կը յուսամ քէ
փոքր ի շատէ ուսումնասիրեցի. գաղրական ժողովաւրդի բազ-
մադիմի հոգեւոր պէտքերը ու նոցա մատակարարութեան եղա-
նակն ըստ կարելւոյն իմացայ . Եւ նոյն խոկ իմ անփորձու-
թեան թերութիւններէն սացայ օգտակար խռատ եւ զգուշու-
թիւն առ ՚ի յապայս :

Դոհանամ զԱսուծոյ սացածս եռամեայ անզին փորձա-
ռութեան համար — քէ նորա համար որ բարի եւ հանելի ե-
ղած է , եւ քէ նորա՝ որ տիուր եւ անհանոյ : Գիտեմ որ հա-
նապարհս միշտ համր եւ ուլիլ եղած չէ . առապար ու ժայ-
ռուտ անցեն եւս ունեցած եմ . հոգեւորականին յատուկ դրժ-
ուարութեանց հանդիպած եմ: Բայց այս ամենին համար գարձեալ
փառք կը տամ Ասուծոյ, զի համոզուած եմ որ անհանոյն
նոյնքան իմ օգտի համար եղած է որքան հանելին: Մի Հովի
պէտք է միշտ պատրաս գտնուի այն բազմատեսակ դժուարու-
թեանց համար որ մի արօսական հօսի մէջ սովորաբար կը
հանդիպին . այսօր խորխորասն, վաղը զայն, միւս օր մի
անհատ ոչխարի հօսէն բափառին եւալին ըստ բերման ժամա-
նակի : Հոգեւորականն առանց դժուարութեանց կը նմանի ծոյն
եւ անզործ՝ տանը նսող այն զինուորին որ պատերազմի դըժ-
ուարութեանց մէջ մտած չէ եւ նոցա դէմ դնելու փորձը չունի :

Իմ սրտի գոհունակութեան մեծ գաղտնիքն իմ անցեալ կե-
նաց մէջ , այլ առաւելապէս Քահանայական սուրբ աստիճա-



Եին արժանանալէս ՚ի վեր , Ասուծոյ առաջնորդող մատն եղած
է զոր հանապազ կը տեսնեմ իմ առջեւ , որ կը խրախուսէ ՚ի
բարին , կը զգուշացնէ ՚ի չարէն . այս աւուր վիշտն միւս օր
միսիրարութիւն կը բերէ հանդերձ փորձառութեամբ :

Կարծեմ Զեզ եւս հետաքրիր ու շահաւէս լինելու է , սփ-
րեցեալիդ իմ ՚ի Տէր , այս սուրբ Տարեդարձին առքիւ փոքր ինչ
խորհիլ այդ եռամեայ հոգեւոր փորձառութեան վերայ որ ձե-
րինէն անջատ չի կարող լինել . զննենք նորա պարզեւեալ
պտուղներն , եւ տեսնենք թէ դեռ ի՞նչեր պիտի պարզեւէ . մի
համառօս հաւուեկիու պատրաստենք եւ տեսնենք թէ մեր հո-
գեւոր հաշիւներ ի՞նչ վիճակի մէջ են :



ՔՐԻՍՏՈՍ, ՀԱՆԳԻՄ ՀՈԳԻՈՑ

Քրիստոս մի մեծ խնդիր լուծեց : Դարերէ հետէ
մարդկային ազգն տարակուսաննաց և մտատանջու-
թեան մէջ ընկալմեալ , սրտի ու հոգւոյ սփոփանք ու
հանգիստ կը վնասուէր , ներքին երջանկութեան հետա-
մուտ էր . այլ իւր բոլոր ջանքով ու հնարքով հանդերձ՝
այդ ցանկալի երջանկութենէն ու հանգիստէն հետու
կը գտնուէր : Աշխարհիս ամենատեսակ փառքեր ու ճո-
խութիւն , մարմնաւոր քաջութիւն և մտաց կորով , ի-
մաստութիւն և ճարտարութիւն , հեթանոս ազգաց
յուսահատ սիրտերէն գոհունակութիւն չը կարողացան
ընծայել . ոչ եւս իւրեանց կրօն — արարածոց և ձե-
ռագործաց պաշտումն — կարող եղաւ զնոսա այդ
նպատակին հասցնել : Մի ալէկոծ նաւու պէս անստու-
գութեան և մտային ու հոգեւոր ալեաց մէջ կը տարու-
բերէն մարդիկ , մինչեւ Տէրն մեր երկնային խաղաղ
նաւահանգիստը ցոյց տալով՝ կոչեց . « Եկայք առ իս
ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգու-
ցից զձեզ : Առէք զլուծ իմ' ի ձեզ և ուսարուք յինէն ,
զի հեզ եմ և խոնարհ սրտիւ , և գտչիք հանգիստ ան-
ձանց ձերոց : Զի լուծ իմ քաղցր է , և բեռն իմ փոք-
րոգի : »

Մարդկային ազգի գարաւոր երկմասութիւն այլ
եւս փարատեցաւ . անլուծելի համարուած ամենա-
ծանր խնդիրն լուծուեցաւ անձնիւր մարդու համար
որ իւր ականջները կը բանար Տէրունական ձայնին : Աշ-
խարհիս պատմութեան մէջ չը լսուած ու չը տեսնուած
ոգեւորութիւն մը եկաւ Քրիստոսի առաջին աշակեր-
տաց վերայ : Մինչեւ ցայն վայր երջանկութեան աղ-
բեւր կարծուած նիւթական հարստութիւն ու մեծու-
թիւն մէկ կողմ կը ձգէին մարդիկ և գունդագունդ կը

գիմէին յերկնային նաւահանգիստն ուստի Աստուածա-
յին ձայնը կը գար, «Եկայք առ իս, և գայլիք հանդիսա-
անձանց ձերոց»։ Այս հանգիստը ձեռք բերելու հա-
մար որեւէ երկրաւոր գին սուզ չէր։ այն երջանկու-
թիւն ու հանդիսող զոր իւրեանք և իւրեանց նախնիք
վայրապար փնտուած էին երկնից տարերց մէջ և չէին
կրցած գանել, այժմ անակնկալ ճոխութեամբ կը գըտ-
նեն՝ի Քրիստոս և նորա սուրբ Աւետարանի մէջ։ իւր-
եանց սիրելիներէն և աղքականներէն բաժանուիլ, իւր-
եանց մարմնաւոր նիւթեղէն դոյքերէն զրկուիլ, չար-
շարանաց և նեղութեանց ենթարկուիլ, և մինչեւ իսկ
իւրեանց մարմնաւոր կեանքը զոհել՝ի սէր այդ ճշմար-
տութեան՝ մի չնչին այլ քաղցրիկ պարտականութիւն
կը համարէին։

Իը կարդանք՝ի Գործո Առաքելոց թէ երբ առա-
ջին անդամ Առաքեալք բանտարկուեցան և ապա գա-
նահար լինելով արձակուեցան, «Նոքա գնացին ինդա-
լով յերեսաց ատենին, զի վասն անուանն (Յիսուսի)
արժանի եղեն անարդելոյ։» Պաւլոս Առաքեալ առ
կորնթացիս գրեալ երկրորդ թղթոյն մէջ իւր կրած նե-
ղութիւններն ու հալածանքներ՝ի սէր Քրիստոսի, կը
թուէ մի ըստ միոջէ ինչպէս ինչպէս մի զօրապետ պար-
ծանօք կը թուէ իւր յաղթութեան նշաններն ու մե-
դալներ, և՝ի վերջոյ կասէ, «Վասն որոյ հաճեալ եմ
ընդ տկարութիւնս, ընդ թշնամանս, ընդ վիշտս, և
ընդ նեղութիւնս վասն Քրիստոսի։»



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՑԻՆ, ՄԵՐ ԱԶԳԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ

ԳԱԻԻ ԹՆ

Խնչ որ մեր ազգին և մասնաւորապէս սիրելի ժո-
ղովրդեանս կը վերաբերի, Հայաստանեայց Եկեղեցին
է այն միջոցն որով հաճեցաւ Աստուած վերոյիշեալ ե-
րանաւէտ հանգիստն և յաւիտենական փրկութիւն ըն-
ձեռել մեզ. Քրիստոս Սուրբ Աւետարանի լուսով մեր
միաքեր ու հոգիներ լուսաւորել։ Արդարեւ Հայաստա-
նեայց Եկեղեցին երբէք չի գատապարտեր իւր սահմա-
նէն գուրս գտնուող քրիստոնեաներն, և ինքզինքն մի-
միայն փրկութեան միջոց չի հռչակեր, վասն զի իւր հա-
սարակաց պաշտամանց մէջ նա միշտ կ'ազօթէ վասն այ-
նոցիկ, և նոցա բարեխօսութիւնը կը հայցէ, «Յա-
րեւելից մինչեւ՝ի մուտս արեւու կարդան զանուն
Տեառն սրբութեամբ։» Մէկ խօսքով աշխարհիս այլ-
եւայլ երկրաց մէջ գտնուող և առաքելական աւան-
դութիւն ունեցող բոլոր աղքային Եկեղեցեաց հետե-
ւողը կարեն նոյնքան բարի քրիստոնեայք լինիլ և երկ-
նից արքայութեան արժանանալ որքան մի հայ։

Սակայն քանի որ Աստուած մեր ազգին առանձին
սիրով մի ինքնուրոյն Եկեղեցի չնորհած է, որ անկախ
ոկզինաւորութեան հրաշալի պարագայիւք և փառա-
ւոր աւանդութեամբ շրջապատեալ է, կը հետեւի թէ
Աստուծոյ անյեղլի կամքն է որ ամեն Հայ այդ սուրբ
Փարախի ներքոյ պատապարուի, և միայն այդ սուրբ
հաստատութեան մէջ զնուել և գտնէ իւր փրկութիւն,
Ո՛րքան սխալ է և մեր Եկեղեցոյ ոգւոյն հակառակ այն
գաղափար թէ «Արտաքոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ
շիք փրկութիւն» ընդհանուր առ մամբ։ այսինքն, նոյն
իսկ այն օտարազգեաց համար որք 'ի ծննդենէ Կաթու-

զիկէ Եկեղեցւոյ մի ուրիշ ազգային ճիւղի հպատակ եղած են. սակայն և այնպէս ուղիղ և նախընթաց բացատրութեան համաձայն թէ «Մի հայու համար արտաքոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ չիք փրկութիւն»:

Ա. Առաքեալն Պետրոս Փոքը Ասիոյ նորահաստատ Եկեղեցեաց շրջաբերական թուղթ ուղելով՝ կասէ. «Այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեփական»: Ինչպէս այն ժամանակի քրիստոնեայ հասարակութիւն, նոյնպէս և ներկայ դարու իւրաքանչիւր տոհմային Եկեղեցի մի «սուրբ ազգ» կը կազմի, և ուղղակի իւր երկնային Փեսային հետ միանալով՝ միացած կը լինի նաեւ միւս քոյր Եկեղեցեաց հետ. և թէպէս մարդկային զառածեալ բնութիւն առայժմ արգելու արտաքին միութիւն, այլ ներքին միութիւնը կատարեալ է ի ձեռն երկնաւոր Հօտապետին մերոյ, որ իւր ամենակալ Աջովք կը պահպանէ արեամբ իւրով գնեալ իւր սուրբ Եկեղեցին»:

Ուրեմն շնորհիւ սուրբ Աւետարանին «ընտիր - սուրբ ազգ» մի եմք, այսինքն, առաւել քան թէ մի սոսկ աշխատշային կամ տոհմային ազգ. և Հայաստանեայց Եկեղեցին հայոց համար մի հոգեւոր ազգութիւն է որ, ոչ թէ միայն Աւետարանի քարոզութեան առաջին օրէն ՚ի վեր մեր ազգին երկնից արքայութեան առաջնորդ եղած է, այլ նաեւ դարերէ հետէ տոհմային ազգութեան պաշտօն կատարած է. մայրական կաթողին սիւով իւր զաւակաց դարտուր արտասուքն սրբած է և դեռ կը սրբէ:



ԱԻԵՏԱՐԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ, ՍԷՐ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ
ԵՒ ԱՌ ԸՆԿԵՐՆ

Հայաստանեայց Եկեղեցւոյ այս մեծ լուսաւորութիւն հիմնեալ է Ա. Աւետարանի վերայ որոյ բովանդակութիւնն. Ասիրեացես զծէր Աստուած քո, Ասիրեացես զընկեր քո:» Բոլոր քրիստոնեայ վարդապետաց քարոզութիւնք և մինչեւ իսկ փիլսոփայից գրուածներ, ըստ Աստուածաշունչ Ա. Գրոց, ոչ այլ ինչ բայց երե սիրոյ այս պարզ քարոզը կը կարդան ուղղակի կամ անուղղակի կերպիւ, այլեւայլ ձեւերով և օրինակներով: Այս էր պատճառն որ մեր Փրկիչ որեւէ գժուարութիւն չունեցաւ Երուսաղեմի ամենէն անարդ ու ռամիկ ժողովրդեան քարոզելու: Խորայէլեան գեղջուկ խուժանն, քաղաքէն արտաքսեալ և ժողովուրդէն արհամարհեալ բորոտներ և մուրացկաններ, նոյնքան դիւրաւ կը հասկանային այդ պարզ վարդապետութիւն որքան Հրէից ըաբունապետք, գպիրք և փարիսեցիք: Այժմ զկնի հազար ինն հարիւր ամաց, նոյն Փրկչական ձայնն է որ մեզ հետ կը խօսի, և նոյն պարզ պատգամը կ'աւետէ, ամեն մարդու լսելի և հասկանալի: Ամենէն խոնարհ կարծուած քրիստոնեայն գիտէ այս սիրոյ Աւետարան՝ որքան մեծ ամեծ աստուածաբան վարդապետներ և բարձրաստիճան պաշտօնեայք Եկեղեցւոյ:

Ուրեմն այլ եւս ի՞նչ պէտք խորիմաստ բաների մէջ մտնել կը բաւէ որ մենք եւս մեր ներկայ խորհրդածութիւնք այս Տէրունական հին շաւիզովը կատարենք. նախ քան գիրիստոս, սիրոյ այն կատարեալ և ընդհանակ քան գիրիստոս, սիրոյ այն անծանօթ էր նուր գաղափարն զոր նա աւանդեց՝ անծանօթ էր մարդկային ազգին. նա ինքն կապ և միջնորդ էր ՚ի մէջ Աստուածոյ եւ մարդկան — Աստուած մարդացեալ,

որպէս զի մարդիկ բարձրանան առ Աստուած, որպէս զի մարդիկ աշխատին աստուածային կատարելութեան հասանիլ. երկնային սիրով սիրեն զԱստուած և զընկեր. զի կատարեալ ընկերսիրութիւն չկայ առանց Աստուածսիրութեան, ոչ եւս Աստուածսիրութիւն կարելի է երեւակայել առանց ընկերսիրութեան: «Եթէ ոք ասիցէ եթէ «Սիրեմ զԱստուած, և զեղբայր իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն ետես՝ զիարդ կարիցէ սիրել:» — Ուրեմն քննենք նախ այն կէտեր որ քրիստոնեայ ժողովրեան աստուածսիրութեան պարտուց կը պատկանին և ապա զայնս որ ընկերսիրութեան կը վերաբերին.

Ա Ղ Օ Թ Ք

Ա. Պատարագի միջոցին Հայր մեր էն յառաջ, քահանային լուելեայն կ'աղօթէ. «Աստուած ճշմարտութեան եւ Հայր ողորմութեան, գոհանամք զքէն որ 'ի վեր քան զերանելի նահապետացն, զմեր պարտաւորելոցս մեծարեցեր զբնութիւն. վասն զի նոցա Աստուած կոչեցար, իսկ մեզ Հայր հանեցար անուանիլ զրայով: Նախ քան զգալուստն Քրիստոսի, մարդիկ յԱստուածոյ կ'երկնչէին, կը սոսկային, իսկ Քրիստոս առաջին անդամ պատուիրեց մեզ սիրել զնա, եւ մտերմական սիրով սիրել զնա իրբեւ ծնող, իրբեւ հայր. զի մարմնաւոր ծնողէ եւս աւելի կը սիրէ և կը ինամարկէ զմեզ. և 'ի վերջին աւուրս վասն Միաձնի Որդւոյն իւրոյ «Հայր հանեցաւ անուանիլ զրայով:» Մենք եւս մեր որդիսկան սէրն առ Աստուած կ'արտայայտենք, ըստ օրինակի և պատուիրանի Տեառն, աղօթելով առ նորա հրամանները պահելով:

Աղօթքն է այն միջոցն որով մեր միաքեր ու հողիներ կը բարձրացնեմք առ Աստուած, մեր որդիսկան յարդանքը կը մատուցանեմք նմա եւ նորա հայրական գդուանք և միխթարութիւն կը վայելենք: Նա որ մեզ պատուիրեց «Յամենայն ժամ յաղօթս կացէք,» ինքնին «Հանէր զգիշերն 'ի գլուխ յաղօթսն Աստուածոյ:» Նոյնպէս կը կարդանք որ յաճախ իւր աշակերտներով հանդերձ հրէական տաճարի պաշտամանց և տօնակատարութեանց կը մասնակցէր:

Քրիստոնէական Եկեղեցւոյ կենաց պայմանն է Աղօթքն. Եկեղեցւոյ արեան շրջանն է, կենդանութեան հաւասարիքն է. առանց աղօթքի Եկեղեցի, քրիստոնէութիւն և Աւետարան չոր փայտի և անկենդան դիակներու կը նմանին: Մի Եկեղեցւոյ ոյժ ու զօրութիւն միայն յայնժամյերեւան կը գայ, երբ նորա զաւակունք աստուածամերձ և աստուածախօս ժողովուրդ լինին. արտաքոյ պարագայներ ոչինչ են. մի գիակի զարդարանք ու պաճուճանք են:

ԱՌԱՋՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹՔ

Աղօթքն երկու տեսակ է. առանձնական և հասարակաց: Կան ոմանք որք իւրեանց քրիստոնէական պարտք լիովին կատարած կը համարին երբեմնապէս եկեղեցի գնալով և հասարակաց աղօթից ներկայ գըտնուելով: Իսկ այլք այսքանն եւս չեն աներ և կ'առարկեն. «Մի թէ աղօթելու համար պէտք է անպատճառ եկեղեցի երթալ եւայլն.» Բայց և ոչ իսկ առանձին կ'աղօթեն: Հասարակաց աղօթից ճշմարիտ սիրողն չի կարող առանձնական աղօթից սիրող չը լինել. ոչ եւս առանձնական աղօթից սիրով կարող է երջանիկ լինել առանց հասարակաց աղօթից մասնակցելու:

ԱՐԱՆՁՆԱԿԱՆ ԱՂՅԹՔ 'Ի ՄԱՍՆԱԻՈՐԻ

Առանձնական աղօթքն այն է՝ երբ կ'առանձնանամք մեր խուցն կամ նոյն իսկ եկեղեցին, ժամերդութենէ յառաջ կամ յետ, և մեր սրտի զգացումներն կը յայտնեմք Աստուծոյ. մեր ընկալեալ շնորհաց և ողորմութեան համար փառք կը տանք, մեր պէտքեր, մեր ցաւեր ու վշտեր կը յայտնենք, մեր գործած մեղքեր կը խոստովանիմք առաջի Աստուծոյ և թողութիւն կը խնդրեմք. աստուածային պատուիրանաց վերայ կը խոկամք, Ա. Գիրքը կը կարդամք և այլ այսպիսի կը թութիւններով առանձնաբար Աստուծոյ կը մօտենամք և նորա հետ կը միանամք:

Քաջ գիտեմ որ մեր մէջ շատեր կան որ առանձնական աղօթքի պէտքը կը զգան, այլ ընտանեկան այլ և այլ անյարմարութեանց պատճառաւ չեն կարող գործադրել: Ուստի մի քանի գործնական առաջարկութիւնք աւելորդ չեմ համարիր. — Ընտանիք չունեցող անհատ մի որ իւր բնակարանին մէջ բոլորովին անկախ է ուրիշէ, կարող է իւր ժամանակն իւր ուղածին պէս կարդագրել. աղօթել և իւր բարեպաշտական կրթութիւններ կատարել ե'րբ, և իւր տան կամ բնակարանի ո'ր անկիւնի մէջ, որ ինքն յարմար դատի: Այսպիսոյն միայն առաջադրութիւն է հաստատամոռութիւն պէտք է: Իսկ ընտանեաց մէջ, ուր այլ և այլ անձինք միասին կ'ապրին մէկ յարկի ներքոյ, մի քիչ դժուարին է. մասնաւնդ աղօթքի տեղը, գիրքը և մինչեւ իսկ առարկայն որոշելու համար: Բայց այս բոլոր դժուարութիւններ կը փարատուին, երբ ընտանեաց գլուխներ, հայր և մայր, բարի օրինակաւ և ծնողական իշխանութեամբ հարկ եղածը կարդագրեն: Ոմանք կարող են մի սենեակ յատկացնել այս նպատակին. կամ ո' եւ է մի սեն-

եակ առաւօտ և երեկոյ այս ինչ ժամերուն իբրեւ ընտանեկան և առանձնական աղօթատեղի յատկացնել և այնտեղ լուռթիւն պահել: Եթէ այս եւս դժուար թուի, գոնէ առաւօտաներն երբ համայն ընտանիք նախաճաշի կը հաւաքուի, նախապէս հինդ տասը վայրկեան մեր եկեղեցւոյ Աղօթագրքէն առաւօտեան գոհաբանութիւն մատուցանել, և նոյնպէս երեկոյեան՝ գիշերային հանգստութեան համար իրարմէ բաժնուելէ յառաջ նոյնը կատարել, համառօտ խրատականաւ կամ Ա. Գրոց ընթերցուածով հանդերձ:

Հայրի'կ կամ մայրի'կ, ի զուր ժամանակ կը վատնես՝ զաւակիդ Հայր մեր կամ ուրիշ աղօթք կը սորվեցնես, երբ գու ինքդ նորա մօտ չես չոգեր կամ ձեռնամած կայներ և աղօթեր. երբ գու նորա ներկայութեան Աստուծոյ հետ չես խօսիր իրեւ գէմ յանդիման: Գոց սորված աղօթքն զաւակիդ համար մի ձանձրացուցիչ գաս է, քանի որ նորա իրական գործածութիւն չը գիտէ: Քո պարտքն է ժամանակ առ ժամանակ զաւակացդ. հետ Աստուծոյ և իւր Ա. Եկեղեցւոյ վերայ խօսիլ. նորա յայտնութեան պատգամներն բացարել նոյսա. նորա սրբոց կեանքն ու վարքը պատմել եւ բարի օրինակներով տպաւորել 'ի նոսա սիրոյ Աւետարանն: Եթէ մինչ ցարդ քո այդ ծնողական պարտքն սկսած չես, հիմա սկսիր, գեռ ուշ չէ:

ԱՐԱՆՁՆԱԿԱՆ ԱՂՅԹՔԻ ՆԻՒԹՆ ԵՒ ԶԵՒՆ

Առանձնական աղօթից ձեւը լինելու է նախ և յառաջ, ինչպէս վերը գիտեցի, մեր սրտի զգացմանց արտայայտութիւն պարզ ոճով և մեզ հասկանալի լեզուաւ, լինի այդ աշխարհաբառ կամ գրաբառ: Բայց

Հայաստանեայց Եկեղեցւոյ հարազատ զաւակունք պարա-
փին յարգել մեր Եկեղեցւոյ պաշտօնական Աղօթա-
գիրքն, և նորա ճոխութենէն օգտուիլ: Այդ գրեթէ
Աստուածաշոնչ աղօթքներ որ յընթացս դարուց մեր
ընտրեալ սրբոց և հայրապետաց բերաններով սրբագոր-
ծուած են, կը պարունակեն մարդկային ամենատեսակ
զգացմանց մաղթանքներ, և Աստուծոյ հետ խօսելու
առարկայներ ու ձեւեր: Ուստի յոյժ ցանկալի է որ Ե-
կեղեցւոյ մանկունքս այդ աղօթից հետ ընտելանամք,
որպէս զի մեր առանձնական աղօթքն եւս սերտիւ կա-
պուած լինի հասարակաց աղօթից հետ: Այսու հան-
գերձ եթէ մէկն այդ աղօթքները հասկանալու չափ
գրաբառ չը գիտէ, լաւ է որ այդպէսն աշխարհաբառ
կամ իւր հասկանալի լեզուաւ աղօթէ քան թէ գրա-
բառ աղօթքներ արտասանէ առանց միտքը հասկանա-
լու: Ուս այս ջերմապէս կը յանձնարարեմ Գեր: Տէր
Յովհաննէս Մկրեան Եւագ քահանայի հրատարակեալ
Ժամագիրք - Աղօթագիրքն որ իւր գիւրատար գիրքով
մի հայ քրիստոնէի բոլոր պահանջները կը գոհացնէ. և
միակ առաջին փորձն է՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ
պաշտամունքը թէ՛ գրաբարագէտին և թէ՛ սոսկ աշ-
խարհաբառ հասկացողին գիւրամատչելի առնելու:

Բարեպաշտ քրիստոնեայն պէտք է նաեւ կարող
լինի երբեմն ինքզինքն աղօթագիրքէ աղատ կացուցա-
նել, իւր միտքն պարզապէս իւր Արարչին յայտնելով՝
իւր սրտի ու մտաց և ժամանակի թելագրութեամբն,
Անգիր աղօթելու չափ կարեւոր և երբեմն գեռ աւելի
կարեւոր է մեր Եկեղեցւոյ աղօթից առօրեայ գործա-
ծուածներէն մի քանիսն — ինչպէս Գոհանամի՛ զի՞ն,
Լուր ճայնից մերոց, Օրհնեալ Տէր որ բնակեալդ եւ-
այլն, բոլորովին գոց սերտել, որպէս զի կարենամք ՚ի
ստիպել հարկին անգիր առոտասանել՝ իւրաքանչիւր բա-

ոի վերայ խորհելով իրը թէ մեր իսկ բառեր լինէին:
Զարմանալի' է թէ այս հին աղօթքներ ինչքան
բազմագիմի և բաղադրեալ խորհուրդներ յառաջ կը
բերեն, երբ անգիր այլ ծանր ուշագրութեամբ կ'ար-
տասանուին: Ի մանկական հասակի անգիր սովորած էի
Ա. Ներսէս Շնորհալոյ անմահական յիշատակ Հաւատով
խոստովանիմ քսանեւչորս առն աղօթքն: Իմ կենաց
ամենէն անմիխթար ժամերուն մէջ, երբ աշաց ցաւի
պատճառաւ կարգալն անհնարին գարճած էր, և հիւան-
դութիւնը մարմինս ու միտքս այն աստիճան տկարա-
ցուցեր էր որ մի նոր բան մտածելն՝ ինձ մի ծանր բեռ
կը թուէր, իմ այդ անմիխթար գրութեան մէջ միի-
թարութիւն պարգեւողն Հաւատով խոստովանիմ ա-
ղօթքն էր. նորա իւրաքանչիւր տուն, առանց գժուա-
րութեան, բազմապատիկ գեղեցիկ և միխթարական
խորհուրդներ կը բերէր ինձ. իւրաքանչիւր տուն ինձ
համար, այդ թշուառ օրերուն մէջ, յոյժ զուարճացուցիչ
և հետաքրքիր մի մատեան էր: — Ութ ինն տարիներ
յառաջ մահուան անկողնոյ մէջ տառապող մի ծերունի
և աստուածասէր վարդապետի մօտ կեցած էի 'ի Ա.
Երուսաղէմ: Մահուան հրեշտակն արդէն եկած էր իւր
աւանդն առնել տանիլ. բժիշկներ յոյսերնին կարած
մեկնած էին. մահուան քրտինքը կը հոսէր, ոչ մարմոց
և ոչ մտաց կարողութիւն մնացած էր հիւանդի վե-
րայ: Սակայն հիւանդութեան բոլոր ծանրութիւնը չէր
կրցած ջնջել այդ սուրբ մարդու յիշողութենէն այն ա-
ղօթքն որ իւր ամբողջ կենաց մէջ հոգեւոր որոճման
նիւթ մատակարարած էր: Հաւատով խոստովանիմը
սկսաւ, և մեղմ ու չնչահատ ձայնիւ անվրէպ արտասա-
նեց մինչեւ վերջն: Յուզիչ էր հոգեվարք վարդապետի
ոգեւորութիւն երբ իւր երկրաւոր կենաց վերջին վայր-
կենին աշխարհէս 'ի բոլոր որտէ հրաժեշտ առնելով՝



կ'արտասանէր. « Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա՛ զհոդի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց և հանգչել յուսով բարեաց յօթեւանս արդարոց մինչեւ յօր մեծի գալստեան քո: »

ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՂՕԹՔ

Առանձնական աղօթից համար ասածիս մեծագոյն մասը կը վերաբերի նաեւ Հասարակաց աղօթից: Աղօթելու հոգին մի է և զգացումն նոյն լինելու է տանդ առանձնութեան մէջ, ինչպէս 'ի պաշտօն Բարձրելոյն նուիրեալ տաճարի մէջ. ամենատեսն Աստուած ամենուրեք ներկայ է և ամենուրեք կը լսէ մեր աղօթքն: Սակայն Հասարակաց աղօթքն այն համերաշխութիւնը ցոյց կը տայ որ պիտի տիրէ քրիստոնեայ հասարակութեան այլեւայլ անդամոց մէջ, երբ ամէնքը կը հաւաքուին մի առանձին նուիրագործեալ յարկի ներքոյ և միաբան ու միանուագ կը ներկայացնեն իւրեանց մաղթանքն. ուր մեր Ս. Կրօնի գլխաւոր խորհուրդները կը կատարուին և Ս. Աւետարանը հանդիսաւոր կերպիւ կը կարդացուի ու կը քարոզուի:

Եատ ուրեք հայ ժողովուրդը, կամ աւելի լաւ, անհատ հայեր, սովորած են եկեղեցին լոկ իրեւ առանձնական աղօթատեղի գործ ածել: Երբեմն եկեղեցի կ'երթան առանց կատարուած պաշտամանց շատ ուշադրութիւն դարձնելու, այլ իւրեանց համար առանձին կաղօթեն, Սաղմոս կամ մի ուրիշ աղօթագիրք կը կարդան: Երբեմն այսքանն եւս չեն աներ, այլ պարզապէս եկեղեցի կ'երթան ժամ կամ Պատարագ մտիկ ընելու, որ շատ քիչ բան կը նշանակէ: Քահանայք և գպիրք ժողովրդեան աղօթից առաջնորդ են, և ամեն

քրիստոնեայ պէտք է իւր Փամագիրքը այնքան լաւ ուսումնասիրած լինի որ կարենայ ամենայն գիւրութեամբ մասնակցիլ երբեմն լուսութեամբ, ինչպէս քահանայի արտասանած աղօթքներ, և երբեմն եւս իրապէս արտասաննելով և երգելով, ինչպէս Սաղմոսներն, Հաւատամքն և դպրաց բոլոր երգեցմունք: Եկեղեցի յաճախող իւրաքանչիւր անհատ քրիստոնեայ պէտք է համոզուած լինի, որ ինքն եկեղեցի կ'երթայ ոչ որպէս զի այս ինչ նշանաւոր երգեցողի ձայնը լսէ, կամ այն ինչ մեծ հանդիսին ականատես լինի, և կամ այս ինչ քարոզչին ունկնդիր լինելով՝ իւր հետաքրքրութիւնը յագեցնէ. այլ որպէս զի իւր ձայնը լսելի առնէ առաջի Աստուծոյ, և ինքն իւրովսանն հանդիսագիր լինի աստուածային հանդիսին: Այսու հանդերձ Աստուծոյ տան մեծվայելութիւնն երբէք մոռնալու չէ. և եղանակ չը գիտցողն ու անախորժ ձայն ունեցողն աւելի լաւ կ'անէ լուսութեամբ հետեւիլ այլոց, քան թէ հաւատացելոց բարեպաշտութիւնը խանգարել:

Եկեղեցւոյ սրբութիւնն և նոյն իսկ աշխարհային բարեկրթութիւնը կը պահանջէ որ եկեղեցի մտնողն ակնածութեամբ և պատկառանօք վարուի մի այնպիսի չէնքի մէջ որ մի սուրբ և աստուածային նպատակի նուիրագործեալ է: Աղօթքի որոշեալ ժամէն շատ ուշ մտնել եկեղեցի, կամ ամենէն խորհրդաւոր պահուն աղմուկով մէկնիլ, գուներն անզգուշութեամբ իրար զարնել, անխնայ քայլելով կօշիկների շաշիւնով ժողովրդի աղօթքը շփոթել, անտեղի խօսակցիլ, աստ անդնայիլ, ծիծաղիլ, եւայլն. այնպիսի թերութիւններ են որ հայ եկեղեցեաց մէջ շատ անգամ կը տեսնուի, այլ նոյն իսկ այդ յանցաւորներ մի թատրոնի կամ աշխարհական ժողովարանի մէջ՝ աւելի զգուշութեամբ և պատկառանօք կը վարուին: Նոյնպէս սրբազն պաշ-

տամանց միջոցին յատկացեալ ծէսերուն չը համակերպիլ 'ի մասին ծնրադրութեան, չոգելու, կայնելու, նստելու, ձեռքերը կցելու, երեսը խաչակնքելու, և այլ այսպիսի զանցառութիւններ թէ յանցաւորին վնասու արատ կը բերեն և թէ տեսնողին չար օրինակ կը լինին և գայթակղութիւն կը պատճառեն:

Թող չը կարծուի թէ սրբազան պաշտամանց մէջ արտաքին ձեւն և վայելչութիւնը նշանակութիւն չունին: Հոգեբանական օրինօք արտաքին ձեւն մեծ աղդեցութիւն ունի ներքին զգացմանց վերայ. և փորձուած իրողութիւն է որ շատ անգամ բարեպաշտական արտաքին ձեւը ներքին բարեպաշտութիւն յառաջ կը բերէ ուր որ չկայ, ինչպէս աշխարհի փորձառութեամբ դիտենք որ արտաքին քաղաքավարութիւնն բազում ուրեք յարգանաց և պատուոյ անկեղծ զգացում և սրտի աղնուութիւնը կը զարգացնէ:

Սրբազան պաշտամանց արտաքին վայելչութիւն մասնաւորապէս օտար երկրաց ու ժողովրդոց մէջ անհրաժեշտ է՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ Քրիստոնէական վեհութիւնը ներչնչելու մեր գրացեաց վերայ, որք փոխանակ օգտուելու և մեր բռնած ուղղութեան ճշշմարտութեամբն համոզուելու, աւելի չը գայթակղին 'ի նախատինս մեր Եկեղեցւոյ և ազգային քաղաքակըրթութեան. և այսպէս ըստ բանի Առաքելոյն, « Անունն Աստուծոյ հայհոյի վասն մեր 'ի մէջ հեթանոսաց: »

ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՒ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Հասարակաց աղօթից գլխաւոր և կեդրոնական մասն է Ս. Պատարագի խորհուրդն, որ իրաւամբ ամենէն ժողովրդական արարողութիւնը դարձած է: Սակայն սոյն խորհրդոյ վեհութեան սիալ ըմբռնումն մեր ազգի մէջ այլեւայլ զեղծումներ յառաջ բերած է: Ս. Պատարագի աղօթքներն ու երգերն ուշի ուշով կարդացողն պիտի տեսնէ որ մեր Եկեղեցին իսկզբանէ անտի պահանջած է և ամէն կիրակի կը պահանջէ որ Ս. Պատարագի մասնակցողք, այսինքն, ներկայ գտնուողք անպատճառ հաղորդուին: Եթէ Ս. Պատարագն մեր Փրկչի վերջին Ընթրեաց միջոցին հաստատեալ խորհրդոյ և պատուիրանի կտտարումն է, ուրեմն գիտենք որ երկոտասան Առաքեալք ամենեքին հաղորդուեցան այդ առաջին Ս. Պատարագէն. և եթէ Առաքելական դարու և նախկին Եկեղեցւոյ սովորութիւն քննենք, որոց ճշգրիտ աւանդութիւնը անփոփոխ պահած է մեր Ս. Պատարագի մատեանն, պիտի տեսնենք որ մեր ժողովրդեան ներկայ թուլութիւն բոլորվին հակառակ է այդ աւանդութեան:

Այն դարու քրիստոնեայք յաճախակի կը հաղորդուէին ամենքը, ի բաց առեալ ապաշխարողները: Ինչպէս 'ի հնումն, այսօր եւս ահեղ Խորհրդոյն նախապատրաստութիւնք կը կատարուին, աղօթքներ կ'արտասանուին, հաց եւ գինի կը նուիրագործուին, և սարկաւագն կը հրաւիրէ բարձր ձայնիւ. «Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք, և սրբութեամբ հաղորդեցարուք: » Սակայն այժմ, կը տեսնեմք շատ անգամ, որ պատարագիչ քահանայէն զատ, հաղորդուող չը կայ: Հակասութիւն է անշուշտ երբ անմիջա-

պէս վերջը այդ չը հաղորդուող ժողովուրդը դպրաց ձայնակցութեամբ կը սկսի երգել. « Լցաք 'ի բարութեանց քոց եւայլն, » որոյ աշխարհաբառ թարդմանութիւնն աստ. գնել աւելորդ չեմ համարիր. « Քու բարիքներովդ լցուեցանք, Տէր, քու Մարմինդ և Արիւնդ ճաշակելով. փա՛ռք 'ի բարձունս մեզ կերակրողիդ՝ որ միշտ կը կերակրես զմեղ. քու հոգեւոր օրհնութիւնդ մեր վերայ զրկէ. փառք 'ի բարձունս մեզ կերակրողիդ: » Եւ ապա նորէն կ'երգեն. « Ենորհակալ եմք քենէ, ո'վ Տէր, որ կերակրեցիր զմեղ քու անմահական սեղանէդ, բաշխելով քու Մարմինդ ու Արիւնդ՝ աշխարհի փրկութիւն և մեր անձերուն կեանք ըլլալու համար: »

Երեւակայեցէք, մի ազնիւ բարեկամի հրաւէրն 'ի ճաշ կ'ընդունինք, ամեն պատրաստութեամբ կը մըտնենք ճաշարահն, կը նստինք դրդալներ ու պատառաքաղներ իրարու կը զարնենք, բայց ամենեւին չենք ուտեր: Եւ 'ի վերջոյ կ'ասենք. « Ենորհակալ ենք, կերակուրներդ աղէկ էին, լաւ կերանք կշտացանք եւայլն: » Հիմա, այս զեղծում մեր ազգի մէջ այնքան խորապէս արմատացած է որ յիմարութիւն կը լինէր որեւէ եկեղեցականի կողմէ՝ ուզել մէկ հարուածով առաքելական սովորութիւնը վերահաստատել: Այսօր ամեն մեծ քաղաքի մէջ բաղմաթիւ քրիստոնէի անուն կրող հայեր կան որք թէեւ յաճախ եկեղեցի կ'երթան, այլ շատ քիչ անդամ կամ ոչ երբէք կը հաղորդուին: Այդ աստիճանի բարեպաշտ երեւիլն իննեւտասներորդ դարու լուսաւոր ոգւոյն հակառակ կը գտնեն: Հարցուփորձով կրցած եմստուգել որ շատեր եւս կան որք 'ի ներքուստ քրիստոնէական ողի կը կրեն, այլ որովհետեւ մէկ անդամ այդ անտարբերութեան մէջ ինկած են, կը դժուարանան բարի սկզբնաւորութիւն մի անել, և

մի քիչ եւս այլոց կարծիքներէն կը վախնան ու կ'ամաչէն:

Ուրեմն զարմանալի չէ որ 'ի սփիւռս Անդղիոյ գլունուող հայ գաղթականութեան մէջ եւս մի համեմատական բաժին ունինք այս ընդհանուր զեղծման և ժամանակիս անտարբերութեան: Ինչպէս յայլ ամենայն իրս, նոյնպէս և այս կէտին մէջ, հնացեալ սխալն զգուշութեամբ և կամաց կամաց պիտի ուզզուի: Առաջին քայլն է որ հասկացողն ինքնին իւր սխալն տեսնէ և ուրիշներու եւս հասկացնէ: Յետ այնու բարի օրինակաւ յառաջ ընթանայ ոչ թէ առաքելական դարու քրիստոնէից պէս ամեն Ս. Պատարագի — թէպէտ և ցանկացողն այս եւս կարող է վայելել առանց օրինական արգելքի, — այլ եկեղեցւոյ գլխաւոր տօներուն, տարին հինգ վեց անդամ հաղորդուի, և իւր ազգեցութեան ներքոյ գանուող բոլոր անձեր, ընտանիք, զաւակունք եւայլն. նոյն համոզման բերէ, զայնս առաջնորդելով 'ի Ո. Սեղան, գայ կայնի իւր Արարչի մօտ պարզերես՝ Սաղմոսերգուի խօսքերով. « Ահաւասիկ ես և մանկունք իմ զոր ետ ինձ Աստուած: » Ճշմարիտ հաւատացեալն պէտք է ամենայն երկչոտութիւն և մնութիւնածածութիւն իւրմէ փարատէ յիշելով մեր Փրկչի խօսքեր. « Զի որ ամօթ համարեսցի զիս և զբանս իւր, զնա և Որդի Մարգոյ յամօթ արասցէ յորժամ գայցէ փառօք իւրովք և Հօր և հրեշտակաց սրբոց: »

Ս. Պատարագի ժամէն դուրս հաղորդուիլն կը նշանակէ թերակատար մասնակցութիւն Ս. Խորհրդոյն, քանի որ մարդ առողջ է եւ հիւանդութիւն չունի: Ո. Հաղորդութիւնն որ եկեղեցւոյ մէջ կը պահուի՝ կը կոչուի Յետիմ թոշակ, և կը տրուի, կամ պէտք է տրուի, միայն ծանր հիւանդաց որք կարող չեն անձամբ եկեղեցի գնալ և Ս. Պատարագին ներկայ գլու-

նուիլ։ Երբեմն նաև յանկարծական և սահպողական պարագայից մէջ, երբ Ս. Պատարագին ներկայ գըտնուիլն անհնարին համարուի, օրինակի համար, յանկարծական ճանապարհորդութեան առթիւ, կրնայ նաև առողջաց մատակարարուիլ։ Սակայն առանց օրինաւոր պատճառի, գլխաւորաբար ծոմ չը պահելու համար կամ ուրիշ կերպիւ անձնական հանգստութիւնը չը խանգարելու պատրուակաւ, Յետին թոշակէն հաղորդութիւն տալն որպէս և հաղորդուիլն՝ անկանոնութիւն է և հետեւաբար մեղք է։

Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ, ԿՆՔԱՀԱՅՐՈՒԹԻՒՆ

Մի երկու խօսք եւս Ս. Մկրտութեան Խորհրդոյն վերայ խօսիլ արժան կը համարիմ։

Մկրտութիւնն Քրիստոնէական Եկեղեցւոյ անդամակցութեան խորհուրդն է որով երախայն «Գնեալ արեալին Քրիստոսի՝ ի ծառայութենէ մեղաց, ընդունի զորդեգրութիւն Հօրն երկնաւորի, լինիլ ժառանգակից Քրիստոսի, և տաճար Հոգւոյն Սրբոյ։» Մեր Եկեղեցին կը պահանջէ նորածին մանուկն ըստ կարի փութով, ընդհանրապէս ծննդեան ութերորդ օր, ՚ի Ս. Մկրտութիւնն քերել, որովհետեւ Եկեղեցին կ'ուզէ օր յառաջ իւր զաւակներն երկնից արքայութեան ժառանգներ գրել, զի մի գուցէ, ՚ի դէպս յանկարծական մահու, այդ Ս. Խորհուրդէն զրկուին։ Այլ քանզի գեռատի մանկունք պէտք եղած հասկացողութիւնը չունին որ այդ ահաւոր Խորհրդոյ նշանակութիւնն իմանան և դորա պատասխանաւութիւն իւրեանց վերայ առնուն, Եկեղեցին մի արժանաւոր խնամակալ կը հաստատէ, մանկան ծնօղներէն զատ, որ կնիքահայր անուամբ մկրտեալ մանկան կողմանէ քրիստոնէական կենաց և

վարուց պատասխանաւութիւն յանձն կ'առնու, այսինքն, կ'ընդունի իւր հոգեւոր խնամոց յանձնուած մանուկն կրթել քրիստոնէական օրինաց համեմատ, և նորա վարուց ու բարուց վրայ հսկել մինչև նորա յարբունս համարին, երբ մանուկն ինքնին կարենայ այլ եւս լիովին ըմբռնել այն ուխտ ու պատասխանաւութիւնն որ իւր կողմանէ եղաւ առաջի Ս. Աւազանին կնքահօր բերանով։

Եկեղեցին մեծ իմաստութեամբ մանկան ծնօղաց օգնական կը կարգէ մի այլ անձ — կնքահայրը. որովհետեւ ծնօղները կրնան լինիլ անարժան կամ տգէտ ու անուս անձինք։ Ուստի կը հետեւի որ մի այնպիսի անձն պէտք է կնքահայր ընտրուի որ իւր գիտութեամբ, քրիստոնէական հաւատովն ու առաքինասէր վարուքն արժանաւոր առաջնորդ և երաշխաւոր հանդիսանալ կարենայ մկրտեալ մանկան։

Ոյսու հանդերձ ձեռնհաս ծնօղք չը պիտի կարծեն թէ իւրեանք որեւէ պատասխանաւութենէ զերծ են. իւրեանք եւս պարատին իւրեանց կարողութեան չափ կնքահօրը այշակցիլ և իւրեանց զաւակի գլխաւորապէս քրիստոնէավայել կրթութեան համար հոգ տանիլ։

Այս գեղեցիկ սովորութեան և օրինաց գէմ գործուած զեղծումն եւս, կարող եմ ասել, մեր ազգի և Եկեղեցւոյ զաւակաց համար աղետալի եղած է։ Կնքահայրութիւնն մեր մէջ այսօր որեւէ նշանակութիւն չունեցող, անպատասխանաւու, բարեկամական մոերմութիւն մի է։ Կնքահայր կը ներկայացունեն մի անհաւատ կամանտարբեր քրիստոնեայ, և մինչև իսկ մի այլագաւան օտարական (գուն ուրեք հեթանոս)։ Ոչ սակաւ կնքահայրութեան պաշտօն կը վարէ նաև մի գեռատի տղայ որ ինքն տակաւին կնքահայրի խնամոց ներքոյ լինելու է, և գեռ ոչ իմացական կարողութիւնն ունի քրիստոնէական հաւատն ըմբռնելու համար, և ոչ այն

պատասխանատութեան նշանակութիւնը գիտէ որ ի
գիմաց իւր գիրկը գտնուող մանկան իւր վերայ կ'առ-
նու : Մէկ խօսքով «կոյր կուրի առաջնորդէ :»

Ով ծնողներ և կնքահայրեր , որ շատ անդամ ձեր
զաւակաց ու սաների բազմութեամբը կը պարծիք , մեր
Եկեղեցւոյ Մաշտոցը ձեռք բերէք , և երբեմն կիրակի
օրեր և ուրիշ ազատ ժամերնուդ կարդացէ՛ք այդ սուրբ
գիրք և իմացէք մեր Եկեղեցւոյ անդամակցութեան
պայմաններ . տեսէք ի՞նչ կարեւոր պարտքեր ունիք կա-
տարելու ձեր և ձերայնոց յաւիտենական երջանկու-
թեան համար : Դուք նոյնքան իրաւունք և պարտիք
ունիք գիտնալու մեր Եկեղեցւոյ օրէնքներ որքան
բարձրագոյն կղերիկոսն : Մենք հայերս յաճախ կը պար-
ծինք թէ Հայաստանեայց Եկեղեցին ժողովրդական Ե-
կեղեցի մի է . սակայն աշխարհական դասէն հարիւրին
քանի՞ն մեր կրօնի տարրական վարդապետութիւննե-
րը գիտեն , կամ մեր Եկեղեցւոյ պաշտօնական գիրքե-
րու — Ժամագրոց , Մաշտոցի և Ս. Գրոց — բովանդա-
կութեան հետ ծանօթ են : Կամ աւելի լաւ ուստի՞ պի-
տի սովորած լինին այս բաներ , քանի որ ոչ գպրոցաց
մէջ կանոնաւորապէս կ'աւանդուին , ոչ եւս ծնողք և
կնքահարք ըստ բաւականին փոյթ կը տանին այսպիսի
իրաց գիտութեան եւ դասաւանդութեան :

Եթէ խորհելու լինինք թէ ի՞նչ մեծ չնորհ և ողոր-
մութիւն ցոյց կը տայ մեզ Աստուած , երբ նա մեզ զա-
ւակ ու շառաւիդ կը պարզ եւէ : Զենք կարող քրիստո-
նական ջերմ հաւատ ունենալ , եթէ այսպիսի մեծա-
մեծ բարեաց համար մեր Երախտագիտութեան զգա-
ցումներ չ'արտայայտենք Եկեղեցւոյ սահմանեալ ճա-
նապարհաւ և կարգադրութեամբ օրհնել տալով ման-
կան ծնունդը և որոշեալ ժամանակին Ս. Եկեղեցի տա-
նելով և մկրտել տալով , և Քառասնօրեայ կարգն եւս
անխափան կատարելով :



ԿԱՐԳ ՔԱՌԱՍՆՈՐԵԱՅ ԸՆԾԱՅՄԱՆ

Քառասունքի կարգն այն է զոր Աստուած Իսրա-
յէլեան ազգի մէջ հաստատեց և Տէրն մեր իւր իսկ օ-
րինակաւն նուիրագործելով վերահաստատեց : Կը կար-
գամք Ղուկասու Աւետարանին մէջ . «Եւ իբրեւ լցան
աւուրք սրբութեան նոցա ըստ օրինացն Մովսիսի , ա-
ծին զնա յերուսաղէմ յանդիման առնել Տեառն :»

Ա. յս Ս. Կարգ երկու նշանակութիւն ունի : Առա-
ջին մօր կողմանէ գոհութիւն առ Աստուած որ ծննդա-
բերութեան ծանր վտանգներէն ազատուած է և իւր
առողջութիւն վերահաստատած , և այժմ զկնի քառա-
սուն աւուրց առաջին անդամ կը մտնէ Աստուծոյ Տա-
ճարը սրբուելու համար . ուստի և քահանայն կաղօթէ
վասն նորա . «Ի բաց լուա զաղտ մարմնոյ և զբիծ հոգ-
ւոյ սորա :» Ինչքա՞ն մայրեր կ'ընկճին ծննդաբերու-
թեան ցաւոց ներքոյ և կը մեռնին կամ երկարատեւ
հիւանդութեանց կ'ենթարկուին : Աղա որքան ապե-
րախտ պիտի համարուի այն մայրն որ այս բոլոր վտանգ-
ներէ ազատուած , մահուան ձեռքէն ճողովրած , ու-
րախ զուարթ կը չըջի , կը զմայի ու կը հրճուի իւր նո-
րածին զաւակի վերայ , սակայն չի խորհիր կամ փոյթ
չի տանիր քառորդ ժամու չափ Աստուծոյ Տաճարը մըտ-
նել և այս անդին բարեաց համար գոհութիւն մատու-
ցանել առ Պարգեւողն ամենայն բարեաց : Ա. յս եւս
գիտնալու է որ ըստ Եկեղեցական օրինաց մի ծննդա-
կան կին առանց քառասնօրեայ սրբութեան կարգը
կատարելու չը պիտի Եկեղեցական սրբազան պաշտօ-
մանց մասնակցի , կամ Ս. Պատարագին ներկայ գտնուի
կամ հաղորդութեան եւայլն . և տակաւին շատ տեղեր
ուր Եկեղեցւոյ աւանդութիւնը բարեխղճութեամբ կը
պահուի , մայրեր մեծաւ երկիւղածութեամբ կը յար-

գեն այս օրէնք և զկնի որդեմնութեան առաջին եկեղեցի գնալն կը լինի իւրեանց քառասնօրեայ սրբութեան և ընծայման առթիւ :

Երկրորդ նշանակութիւնն է — նորածին զաւակն, ըստ օրինի Տեառն, ընծայել Աստուծոյ : Երբ Իսրայէլացւոց պատճառաւ Աստուծոյ ընդհանուր պատուհաս զրկեց Եգիպտոսի վերայ, Եգիպտացւոց բոլոր անդրանիկ զաւակները կոտորելով և իւր ընտրեալ ժողովուրդն այդ սոսկալի պատուհասէն զերծ պահելով, նա պահանջեց որ Իսրայէլացիք 'ի նշան երախտագիտութեան և յանմուաց յիշատակ աստուածային սիրոյ, իւրեանց արու անդրանիկ զաւակներ ընծայեն 'ի սպասաւորութիւն Տաճարի : « Ամենայն արու որ բանայ զարգանդ՝ սուրբ Տեառն կոչեսցի : » Այս անդրանիկներն էին որ Իսրայէլացւոց քառասնամեայ թափառման միջոցին ըստ մեծի մասին հոգեւոր պաշտօն կը կատարէին : Այլ հետզհետէ ժողովրդեան բազմանալու և այլ անպատեհութեանց պատճառաւ հրէից հոգեւորականք կամ քահանայք միայն Ղեւտական ցեղէն ընտրուեցան : Բայց այս ընծայման աւանդութիւնը շարունակուեցաւ . միայն այս տարբերութեամբ որ մանուկն Աստուծոյ ընծայելէն վերջ՝ վերստին կը փրկանաւորէին, այսինքն, յետո կը գնէին « ըստ ասացելոյն յօրէնսն Տեառն, զոյտս տառակաց, կամ երկուս ձագս աղաւնեաց » նուրիթելով Տաճարին, իւրեանց զաւակը նորէն կ'առնէին տուն կը տանէին : Մանուկն Յիսուս միեւնոյն մոռք Տաճար տառուեցաւ և Սիմէոն ծերունոյն ձեռօք ընծայուեցաւ :

Մեր Եկեղեցին այս օրէնք և բարի սովորութիւնն ոչ թէ միայն անդրանիկ արու զաւակի, այլ բոլոր զաւակաց վերայ տարածեց, որովհետեւ նոր Ուխտի մանկունքս մի « սուրբ ազգ » կը կազմենք և ամեն ոք առհասարակ որ յանուն Ա. Երրորդութեան մկրտեալ է :

Նուրիթեալ է 'ի սպասաւորութիւն և 'ի ծառայութիւն Բարձրելոյն . զի Յիսուս Քրիստոս « սիրեաց զմեզ, և ելոյծ զկապանս մեղաց մերոց արեամբն իւրով . և արար զմեզ թագաւորս և քահանայս Աստուծոյ և Հօր իւրոյ : »

Աստ նորէն կը կրկնեմ, ո'րքան քարասիրտ լինելու է մի մայր որ սրտի իրական գոհունակութիւն չի զգար իւր առողջ ու խնդագին մանկան վերայ, մինչ բազմաթիւ մանուկներ ծնունլէն քիչ վերջ կը մեռնին կամ անդէն մեռեալ կը ծնանին, և ինքզինքն և իւր տուն այն հաճոյքէն ու օրհնութենէն կը զրկէ զոր Քառասունքի աղօթքն կ'ընծայէ, Երբ քահանայն մանուկը գիրկն առած առաջի Ս. Սեղանոյ կ'աղերսէ . « Աղաչեմք և խնդրեմք 'ի քէն, պահեա' զտղայս զայս, և աճեցո՞շորհօք անտեսանելի զօրութեամբ քով : »

ԲԱՐԵԽՕՍՈՒԹԵԱՆ ԱՂՈԹՔ ՎԱՍՆ ԿԵՆԴԱՆԵԱՑ

ԵՒ ՀԱՆԳՈՒՑԵԼՈՑ

Հասարակաց Աղօթից մէջ կարեւոր տեղ կը բռնէ բարեխօսութեան աղօթքներն վասն ընդհանուր որպէս և մասնաւոր պարագայից կենդանեաց եւ հանդուցելոց : Սարկաւագի արտասանած քարոզներն կը ծանուցանեն թէ որպիսի՝ պարագայից համար աղօթելու ենք, և շատ անգամ կը յիշեցնեն մեզ մերայնոց հոգեւոր և մարմնաւոր պէտքերն որոց համար մենք աղօթելու կը կոչուինք : Օրինակի համար, Ասացուի ըստ ինքեան առ Աստուծու ուղղեալ աղօթք չէ, այլ յորդոր առ ժողովուրդն որ այս ինչ և այն ինչ պարագայից համար աղօթենք : Սարկաւագը պարագայն կը յիշեցնէ և մենք պիտի աւելցնենք մեր մասնաւոր պէտքը

և երգենք «Տէր ողորմեա»։ Երբ նա կը ծանուցանէ «Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի», » մենք պարտինք լուելեայն աւելցնել, եթէ պէտքը կը զդամք, մանաւանդ «այս կամ այն երկրի։» Երբ Վասն եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, թագաւորաց և իշխանաց աղօթելու կը կոչուիմք, պէտք է լուելեայն աւելցնել այս կամ այն մասնաւոր անուն որ մեր կարծեօք Աստուծոյ մասնաւոր ողորմութեան պէտք ունի։ Երբ կը լսենք Վասն ճանապարհորդաց, նաւորդաց, հիւանդաց և վշտացելոց՝ մեր մասնաւոր մերձակայք և բարեկամք պէտք է յիշուին որք այդպիսի վտանգից մէջ գտնուելով՝ Աստուծոյ օգնութեան կարօտ են։ Երբ կը լսենք «Վասն հոգւոցն հանգուցելոց», » քարամիրտ կամ թերահաւատ պիտի լինիմք եթէ չը յիշենք մեր սիրելիներ որք իւրեանց կենդանութեան ժամանակ որ և է կերպիւ մեր վերայ երախտիք ունեցան կամ սէր ցոյց տուին։

Մենք կը հաւատանք որ Քրիստոսի Եկեղեցին իւր բոլոր բաժանումներովն և ճիւղերովն հանդերձ՝ մի է և միացեալ է Քրիստոսի հետ «ուր և կարդան զանուն Տեառն սրբութեամբ։» Այս ասել կուղենք երբ կը դաւանիմք. «Հաւատամք ՚ի մի միայն ընդհանրական և Առաքելական Ս. Եկեղեցի։» Այս միութիւնը կայ ոչ թէ միայն կենդանեաց մէջ, աշխարհիս վերայ գտնուող քրիստոնէից — Զինուորեալ Եկեղեցւոյ մէջ, այլնաեւ՚ի մէջ մեր և «հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ և ուղիղ հաւատով՝ ՚ի Քրիստոս ննջեցին», » այսինքն, Յաղթական Եկեղեցւոյ մէջ կը դանուին։ Ուստի ինչպէս որ կը հաւատանք թէ յաստեացս փոխուած և «յօթեւանս արդարոց», » Աստուծոյ փառքը վայելով մեր բարեկամներ — սուրբերը կ'աղօթեն մեղ համար և կը բարեխօսեն առ Աստուած, մենք եւս այդ միութիւնը լրացնե-

լով՝ պարտիմք փոխադարձաբար աղօթել վասն նոցա ինչպէս կ'աղօթենք վասն կենդանեաց։

Այսպիսի բարեխօսութեան աղօթք մասնաւոր կերպիւ Ս. Պատարագի միջոցին կը մատուցուի «առաջի անմահ Գառնին Աստուծոյ,» և Պատարագամատոյցի մէջ այլեւայլ տեղեր կան ուր ժողովրդեան մասնաւոր խընդրուածներ կրնայ աւելցնել պատարագիչ քահանային ըստ խնդրանաց ժողովրդեան։

Ուրեմն, բարի՛ քրիստոնեայ, եթէ ունիս մի հիւանդ բարեկամ, հեռաւոր ճանապարհորդ, որեւէ կերպիւ վշտագնեալ մէկն՝ միիթարութեան կարօտ, կամ այնպիսի ո.ք որ կը հաւատաս թէ միայն Աստուծոյ ողորմութեան կը կարօտի իւր հոգեւոր կամ մարմնաւոր տառապանքէն ազատուելու, կամ հոգեւոր կամ մարմնաւոր շնորհք ընդունելու, քո նուիրական պարտքն է քահանային իմացնել և խնդրել որ յիշէ զնա կամ զնոսա առաջի Ս. Պատարագի։ Նոյնպէս հանգուցեալ ազգականացդ համար աղօթել և աղօթք մատուցանել տալ՝ քո նուիրական պարտքն է։ Մեր Եկեղեցին տարւոյն մէջ մի քանի օրեր որոշած է իրբեւ օր յիշատակի մեռելոց, երբ հանգուցելոյն ազգականք գերեզման կ'երթան քահանայի հետ, և այնտեղ մասնաւոր կերպով կ'աղօթեն իւրաքանչիւր հանգուցելոյն համար։

Բարեխօսութեան այս սիրոյ պարտքն որչափ օգուտ է նոցա որոց համար կ'աղօթենք՝ նոյնքան մեղ աղօթողացս համար։ Առանց մեր աղօթքին եւս կարող է Աստուած իւր բարերարութիւնները ցոյց տալ և իւր արարածոցը ողորմիւ։ Բայց այս հոգեւոր կրթութիւնը մեր հաւատն առ Աստուած առաւել եւս կը զօրացնէ և մեր սէր առ ընկերս առաւել եւս ցոյց տուած կը լինիմք նոցա համար աղօթելով։

ԱՍՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Գաղթական ժողովրդեան ամենակարեւոր և միանգամայն ամենալժուարին խնդիրն է ամուսնութեան խնդիր, այսինքն, երբ հայ երիտասարդք, իւրեանց գաղթականութեան սակաւաթիւ լինելուն պատճառաւ, յարմար հայազգի ամուսին ընտրել չը կարենալով, օտարաց հետ կը խնամանան: Զուտ կրօնական տեսակէտով մեր Եկեղեցին որեւէ արգելք չի դներ այսպիսի խառն ամուսնութեանց, և ոչ իսկ անհրաժեշտ կը համարի որ օտար կողմը Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւն ընդունի, մանաւանդ որ այդ առթիւ եղած դաւանափոխութեանց հարիւրին իննուն և ինն միայն կեղծաւորութեան կամ առժամապէս դժուարութենէ ազատելու նպատակաւ և ոչ ներքին համոզմամբ տեղի կ'ունենան: Այսպիսի ամուսնութեանց մեծագոյն վնասն ազգութեանը կը համնի. վասն զի մի բուռն գաղթական ժողովուրդ չի կարող պէտք եղած բարոյական հայկական ազգեցութիւնը ներդործել օտարին վերայ, իւր հայրենեաց մէջ, կամ այդ օտարէն ծնուած զաւակաց վերայ: Մենք փորձով գիտենք թէ ինչքան դժուարին է նոյն իսկ բոլորովին հայ ծնողաց զաւակներ, որ օտարութեան մէջ կը ծնանին, հայ ազգային զգացումներով մեծցնել. ո՞ւր մնաց երբ ծնողներէն մին օտարդի է: Մեզմէ շատ աւելի զօրաւոր և քաղաքակիրթազդի գաղթականք — զոր օրինակ, Անդղիացիք՝ ի Գաղղիա, Գերմանացիք յԱնդղիա եւայլն, — բնական բերմամբ կ'օտարանան իւրեանց պանդխուութեան մէջ, մանաւանդ երբ ծնողներէն մին օտար լինի: Ուստի մեր օտարացեալ զաւակաց վերայ չը պիտի զարմանանք, և չը պիտի կարծենք թէ միայն հայն է օտարասէր:

Ամուսնական խնդրոյն այս հայեացքն աւելի ընկե-

րային և ազգային լինելով, կը թողում որոց կը պատկանի այդպիսի խնդրոց լուծում: Իմ հայեացքը կրօնական է, և խօսքս ոչ այնքան տեղւոյս ներկայ գաղթականաց կը պատկանի որքան ընդհանրապէս այնպիսի վիճակի մէջ գտնուողներին, և մանաւանդ ապագայ սերունդին սպառնացող վտանգներին: Որքան որ մեր Եկեղեցւոյ ոգւոյն ուղղակի հակառակ չէ խառն ամուսնութիւն, այնու հանդերձ կարող է անուղղակի կերպիւ վեասաբեր լինիլ:

Քրիստոնէութիւնը մի սոսկ տեսական դրութիւն չէ զոր մարդկակ իւրեանց մտաց մէջ կարենան պահել, առանց յայտնելու կամ 'ի հանդէս ածելու: Նա մի կրօն է որ պէտք է մեր ամբողջ կեանքը կազմէ ու յարդարէ, մեր վարուց ու բարուց ուղղութիւն տայ, և ամենուրեք և ամեն ժամանակ, թէ մեր առտնին պարագայից մէջ և թէ արտաքին զբաղմանց միջոցին, փայլի և լուսաւորէ: Նորա յաւիտենական ճշմարտութիւնը պիտի երեւայ մասնաւորապէս մեր ընտանեկան յարկի ներքոյ: Ամբողջ ընտանիքը պէտք է միասին և միակրօն ազօթեն և խօսին ու խորհրդակցին սրբազն առարկայից վերայ, Աստուծոյ սքանչելեաց և ողորմութեան վերայ:

Մնողք ամենէն աւելի իւրեանց համերաշխ կրօնասիրութեան բարի օրինակաւն պիտի տպաւորեն իւրեանց զաւակաց սիրտերու մէջ կրօնի սէրն. և միայն այսպիսի կրօնական համերաշխութիւն ունեցող ծնողք կարող են իւրեանց զաւակներ կրօնի և առաքինութեան շաւիղովը մեծցնել: Բայց երբ հայրն այսպէս կը խորհի, մայրն այնպէս, երբ հայրն մէկ Եկեղեցի կ'երթայ, մայրն մի ուրիշ, հայրն այսպէս կը խրատէ, մայրն այնպէս, խեղճ մանուկն սկիզբէն կը շուարի, այլ 'ի վերջոյ կ'ապաստանի կրօնական անտարբերութեան մէջ, ոչ

Հօր կրօնը ոչ մօրը իւր համար որեւէ նշանակութիւն կ'ունենայ, և կրօնապէս անտարբեր մեծցող մարդն ազգապէս և այլ ամենայն իւիք անտարբեր մարդ կը դառնայ: Այսպիսի անտարբեր հայ մի, ինչքան մեծ ու անուանի մարդ եւս լինի, դարձեալ կորսուած է հայ ազգի և Հայաստանեայց Եկեղեցւոյ անդամակցութենէ:

Գաղթական հայոց օտարաց հետ ինամանալու վնասակար հետեւանքն անխուսափելի և անդարմանելի է: Ոչինչ նշանակութիւն չունի թէ Ս. Պատկ հայ քահանայի ձեռքով կատարուեր է, կամ զաւակներն հայոց Եկեղեցւոյ մէջ մկրտուեր են: Մի ահագին գետի հոսանքին բահով դէմ դնելն անկարելի է. միակ ապահով ճանապարհն է զքեզ այդ հոսանքն հեռի պահել: Եթէ կ'ուղես հայ մնալ և զաւակներդ Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ պահել, և հայ ազգին արժանաւոր և հաւատարիմ սերունդ հասցնել, զքեզ բացարձակապէս օտար և խառն ամուսնութենէ հեռու պահէ:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱԿԱՆՑ

«Աստուած, ականջօք մերովք լուաք, զոր հարքն մեր պատմեցին մեղ, զգործն զոր զործեցեր յաւուրս նոցա, յաւուրսն առաջինս:» Դաւիթ մարգարէ այս Սալմոսին մէջ Իսրայէլեան ազգի նոր սերունդի կողմանէ կը խօսի, որք երախտագիտութեամբ կը յիշեն այն դաստիարակութիւն զոր նոքա իւրեանց ծնողներէն և նախորդներէն ընդունած են 'ի մասին այն գործոց «զոր գործեաց Աստուած յաւուրս նոցա, յաւուրսն առաջինս:» Մէկ խօսքով նոր սերունդն երախտապարտ կը զգայ որ իւրեանց հայրեր ու մայրեր խնամք տարեր

են իւրեանց զաւակաց մտաց և սրտից վերայ գրոշմել Աստուածային կրօնի և Մովսիսական օրինաց գլխաւոր և էական ճշմարտութիւններն:

Որդեօք ներկայ ժամանակի հայ հայրերէն և մայրերէն քանի սն կարեն խղճի մտօք խոստովանիլ թէ Աստուածային կրօնի և իւրեանց մայրենի Եկեղեցւոյ ճշմարտութիւններ աւանդած լինին իւրեանց զաւակներուն: Կամ այդ հայ զաւակներէն քանի սն պիտի կարենան այժմ կամ պատագային՝ Սալմոսերգուի խօսքերով գուշէ. «Աստուած, ականջօք մերովք լուաք, զոր հարքն մեր պատմեցին մեղ:» Աւա՛ղ, գիտեմ դէպեր (Ընդդիայէն գուրս) երբ ծնողք ոչ թէ միայն իւրեանց զաւակաց կրօնական դաստիարակութեան համար փոյթչեն տարեր, այլ նաեւ բացարձակ արգելք յարուցած են, և ամէն կերպիւ ջանացեր են զնոսա լստ կարի հեռու պահել կրօնական ազդեցութենէ, աստուածաիրութեան հուրը շիջուցեր են իւրեանց զաւակաց անմեղ սիրտերէն, և փոխարէն՝ իւրեանց աներկիւղած ընթացքով և օրինակաւ՝ անտարբերութիւն և գործնական անկրօնութիւն սորվեցուցեր են: Եթէ ոչ ո՞ւ է այն կրօնական նախանձախնդրութիւն որով մեր հին պատմութեան իւրաքանչիւր էջը օծուած է. մի կրօնասիրութիւն որ ոչ թէ միայն Եկեղեցականաց մէջ կ'երեւէր, այլ ամբողջ ազգի կենացն ուղղութիւն կը տար. և երբեմնակի կը ցոլար միութեան այն հզօր ոգին զոր միայն քրիստոնէական սէրը կրնայ յաւաջբերել, ի՞նչ է պատճառն որ ներկայ դարու երիտասարդ դասն ինքզինքն ազատ կը կացուցանէ Քրիստոսի քաղցր լուծէն և իւր նախնեաց աստուածպաշտութենէն, եթէ ոչ այն՝ որ նոցա հայրեր փոյթ չը տարին պատմել նոցա զգործն զոր գործեաց Աստուած յաւուրս նոցա:»



ԾՆՈՂԱՑ ՊԱՐՏԻՔ ԱՌ ԶԱՒԱԿՈՒՆՍ ԻՒՐԵԱՆՑ

Երբ Աստուած մի մարդու զաւակ կը պարգեւէ, զայն մի մեծ և ծանր պատասխանատութեան կ'ենթարկէ: Որքան մի հայր իւր զաւակի մարմնաւոր առողջութեան հոգ տանելու պարտական է, առաւել եւս նորա հոգւոյ փրկութեան և յաւիտենական կենաց համար փոյթ ամենել պարտի. վասն զի հոգւոյ փրկութիւն և յաւիտենական կեանք այս աշխարհի վերայ անցուցած կենցաղավարութենէ կախուած են: Ի զուր կ'աշխատինք մեր զաւակաց ամեն տեսակ երկրաւոր բարիքներ ընձեռել, եթէ բարեաց ամենապատուականն և ամենէն անհրաժեշտն, այսինքն, սէր կրօնի և երկիւղածութիւն հեռու կը պահենք՝ ՚ի նոցանէ:

Սոլոմոն թագաւորի իմաստութիւն ոչ թէ միայն կրօնի և աստուածպաշտութեան մէջ կը փայլէր, այլ նաեւ աշխարհային իրաց մէջ իւր ժամանակակցաց ամենուն հիացում և զարմանք կը պատճառէր. իբրեւ դատաւոր, դիւանագէտ, հրամանատար, ճարտարապետ, գիտնական և այլն. և իւր այս բաղմակողմանի հմտութեան և հանճարոյ գաղտնիքն աւանդած է Առակաց գրքի սկիզբն՝ ասելով. «Ակիզբն իմաստութեան երկիւղ Տեառն.» Այս մեծ և իմաստուն թագաւորն, քանի որ « երկիւղ Տեառն » իւր սրտի մէջ ունէր, ճոխացաւ ու զարդացաւ և արեգական պէս փայլեցաւ ՚ի վերայ երկրի. այլ երբ այդ աստուածային երկիւղն իւր սրտէն հեռացոյց և ամպարշտութեան ճանապարհ ընտրեց, ինկաւ և իւր հետ ունեցած բոլոր ճոխութիւն և փառք ու մեծութիւն:

Ի՞նչքան հայրեր մեր ազգի մէջ չարաշար յուսավելէպ եղած են իւրեանց զաւակներէն. մինչդեռ նոքա կը յուսային ՚ի փոխարէն երկարամեայ զգուշա-

որ մարմնաւոր ինամոց, բազմածախ դաստիարակութեան յայլեւայլ գիտութիւնս և 'ի լեզուս՝ բարձրագոյն դպրոցաց մէջ, խոնարհ ու համեստ և առաքինի զաւակներ ունենալ՝ ծնողաց փառք ու պարձանք ըերող, 'ի վերջոյ տեսած են իւրեանց առջեւ մոլի և արբշիու ու անառակ երիտասարդներ, որք որեւէ իւիք օգտակար չը լինելէ զատ, անպատութիւն և նախատինք եւս բերած են իւրեանց ալեւորեալ ծնողաց զըլուխն: Ուրեմն արժանի են հայրեր յուսավելէպ լինելու, և իւրեանց արժանեաց պատժոյն մէկ մասն կրելու յայսմ աշխարհի. այն հայրեր որք կը զլանան պատմել որդւոց իւրեանց « զամենայն գործոն զոր գործեաց Աստուած յաւուրս նոցա, » և որք կը զրկեն իւրեանց զաւակներ կրօնի և երկիւղածութեան կրթութենէ, յորմէ անբաժան է բարոյական կրթութիւն:

ՏԵՂԻՈՅՍ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՍՊԱՌՆԱՅՈՂ ՎՏԱՆԳՆ

Մասնաւորելով խօսքս տեղւոյս փոքրիկ գալթականութեան վերայ, ուրախալի է տեսնել հայ ընտանեաց օրլստօրէ աճիլն և տակաւ առ տակաւ մի նոր սերունդի յառաջ գալն: Սակայն այստեղ ծնուող և մեծցող հայ երիտասարդաց ազգային ոգիէն օտարանալու, Եկեղեցւոյ ազգեցութենէն և կրօնի ու առաքինի վարուց ճանապարհէն շեղելու փորձութիւնը շատ աւելի մեծ է քան թէ 'ի հայրենիս և 'ի բնագաւառս մեր:

Հայ մանուկն աչքը կը բանայ եւրոպական ճոխութեան ու յառաջդիմութեան մէջ, տեղական լեզուն կը լինի իւր բնական, աւելի ընտանի քան զիւր մայրենի բարբառ. իւր եւրոպացի գասակիցներէն վար չը մնալու փութաջանութեամբ, որում բնականաբար կը հա-

մածայնին ծնողք, շատ հոգ չի տանիր իւր մայրենի լեզուի գիտութեան, մանաւանդ որ շրջապատող պարագայից չնորհիւ՝ ոչ իւր տոհմային լեզուն, ոչ իւր ազգի պատմութիւնը կը ներշնչէ այն հրապոյրն՝ զոր իւր երկրորդ հայրենեաց լեզուն ու գրականութիւն կը ներշնչեն։ Լեզուի անգիտութեան պատճառաւ Հայաստանեայց Եկեղեցին կը մնայ նորա համար առանց որեւէ նշանակութեան։ մի մեռեալ հաստատութիւն որ ո՛չ ներքին և ոչ արտաքին հրապոյր կամ ոգեւորութիւն ունի։ Միւս կողմանէ եւս հայ լինելու գիտակցութեամբն և թերեւս ծնողաց ազգարարութեամբն, ուրիշ օտար Եկեղեցեաց կրօնական ազգեցութիւնէ ևս ինքզինքն հեռու պահելով, կը մնայ առանց կրօնի և առանց կրօնի հոգեշահ ազգեցութեան։

Քա՛ւ լիցի ինձ չարգգուշակ լինել սիրեցեալ հօտիս նոր սերունդի նկատմամբ։ Հոգեբանական ընթացքն է այս՝ գտնուող պարագայից։ և ինչպէս առողջաբանական տեսակէտով լաւ է գիտնալ որ խոնաւուտ ու գէշ օդի մէջ ապրիլն, անսնունդ կամ վնասակար կերակուր ու տելն՝ բնականաբար հիւանդութիւն և մարմնաւոր ապերջանկութիւն յառաջ կը բերէ, նոյնպէս գիտնալու է բարոյական և հոգեւոր հիւանդութեանց պատճառներն ու վտանգներն որպէս զի ժամանակին նոցա առաջն առնուի։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՐԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Ոմանք այս չարեաց առաջն առնելու համար մի այնպիսի միջոց կ'առաջարկեն որ միայն շատ հարուստներին կը յարմարի։ կ'առաջարկեն որ երբ զաւակը բաւականին մեծնայ, մի քանի աարի իւր հայրենիքը զըլկուի որպէս զի այնտեղ գիտոց երթալով իւր լեզուի ու կրօնի մէջ պէտք եղած կրթութիւնն ստանայ։ Բայց մի

հայ մանուկ մինչեւ հայրենիք գնալու ժամանակ կրնայ այն աստիճան օտարանալ և նորա անմշակ հոգին այն աստիճան կարծրանալ, որ մի քանի տարւոյ հայրենեաց նոյն իսկ ամենաբարձր հաստատութեանց մէջ ստացած կրթութիւնն կարող է ապարդիւն մնալ, գէթ 'ի մասին կրօնի։ Այս առաջարկութեան անբաւականութենէ զատ, մտածելու ենք որ այժմ Մանչէսթրի մէջ ունինք նաեւ մի միջին գասակարգ, որոց համար այսպիսի երկար և սուղ ճանապարհորդութիւն շատ ծանր՝ գուցէ և անկարելի լինի։ Նաեւ մտածելու է որ վերջին տարիներս սկսած ենք մի աղքատիկ գասակարգ եւս ունենալ, որոց համար այդպիսի խորհուրդ բացարձակապէս անհնար է։

Միակ յուսալի և գիւրաւ գործադրելի գրութիւնը կը թուի լինել Ս. Հոգի Եկեղեցւոյս հովանաւորութեան ներքոյ ունենալ մի ազգային գպրոց, յորում շաբաթական մի քանի անգամ գաղթականութեանս մանուկներ հաւաքուին և ազգային լեզուի, պատմութեան և կրօնի ուսումն ստանան հմուտ և երկիւղած գասատուի ձեռամբ։ Դառաւանդութեան օրեր և ժամեր կրնան այնպէս որոշուիլ ու կարգադրուիլ, որ մանուկներ կարենան անխափան յաճախել նաեւ անգլիական գպրոցներ ուրիշ գիտութեանց համար։

Այս կերպիւ ստացած կրթութիւն հարկաւ տարրական կը լինի, բայց այն առաւելութիւնը կ'ունենայ որ 'ի մանկութենէ աւանդուելով՝ խոր արմատ կը ձգէ նոցամաց մէջ և զօրաւոր պատուար կը հանդիսանայ օտար փորձութեանց գէմ։ Յետ այնու եթէ ծնողներէն ոմանք փափագ ու միջոց ունենան իւրեանց զաւակներ 'ի հայրենիս բարձրագոյն հայ գպրոցներ զրկնելու, մանուկներ արդէն փոքր 'ի շատէ պատրաստուած կը լինին, և իւրեանց ուղեւորութիւն աւելի օգտակար կը լինի։

« ՍԻՐԵՍՑԵՍ ԶԸՆԿԵՐ ՔՈ ԻԲՌԵՒ ԶԱՆՉՆ ՔՈ. »
ՔՐԻՍՏՈՍԻ ՕՐԻՆԱԿ

Դառնամք այժմ աստուածային երկրորդ պատուիրանին, այն է՝ « Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո. » Տէրն մեր որ աստուածային պատուիրաններն այս երկու մեծ ճիւղերուն բաժանեց, իւր անձին օրինակաւն եւս ցոյց տուաւ թէ ի'նչպէս պարտինք կատարել զայնս։ Այն որ օրինաց և վարուց ամենաբարձր կատարելութիւն կը քարոզէր, որ ընկերին ' յիմար ' կամ ' մորոս ' անուանաբարկելն, նորա դէմ քէն պահելն կամ նորա զայրոյթը գրգռելն, նոյնքան դատապարտելի կը հոչակէ որքան նոյն իսկ սպանութիւն, որովհետեւ այս վերջինը նախասացեալ յոռի դգացմանց արդիւնք է, նոյն երկնաւոր վարդապետն դործով կատարեց այս խիստ օրինաց ամբողջութիւնն, իւր ամբողջ կեանքը նուիրելով յօդուտ մարդկային ազգի, նախ անհատաբար իսրայէլի ժողովրդեան ու ազգի մէջ, և ապա ընդհանուր աշխարհի։

Անկարելի է չը զգածուիլ Քրիստոսի հայրենասիրութեան վերայ երբ կը կարդանք այն սարսեցուցիչ բացագանչութիւն։ « Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոսորէիր զմարդարէմն և քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ. քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո զոր օրինակ ժողովէ հաւ զձագո իւր ընդթեւովք, և ոչ կամեցարուք։ » Կամ երբ Խաչն ուսին 'ի Գողդոթա կը բարձրանայ որպէս զի մատուցանէ այն մեծ Պատարագն 'ի Վրկութիւն ազգի մարդկան՝ զոր նա այնքան սիրած էր, բարեպաշտ կիներ ողբալով կը հետեւէին նմա, կը դառնայ և կ'ասէ. « Դսուերք Երուսաղէմի, մի լայք 'ի վերայ իմ, այլ լացէք 'ի վերայ անձնց և որդւոց ձերոց. » Երբ թէ ասել կ'ուզէ. « Իմ

մահս թող ձեզ չը վրդովէ, ձեր օգտի համար է, դուք ողբացէք Հրէից քարասիրա ազգի վերայ որոյ ապագայ թշուառութիւն մարդարէաբար կը տեսնեմ և որոյ համար ես եւս անդադար ողբացի ու հառաչեցի։ » —

Արդարեւ հոգեւոր փրկութիւն ընձեռելու եկած էր Քրիստոս, հոգեւոր թագաւորութիւն հաստատելու, հոգեւոր չնորհներ պարդեւելու. այսու հանդերձ այն որ միանգամայն Սրարիչն էր « ամենայն մարդկան և ամենայն եղելոց, » չէր կրնար ամենաշերմ համակրանք չը զգալ մարդկային պիտոյից և աղետից ու թշուառութեանց վերայ. մարմնով հիւանդաց բժշկութիւն կը չնորհէր, աղքատներն ու անարդ համարուածներ կը սփոփէր ու կը միփիթարէր, խուռն բազմութեանց հոգեւոր կերակուր տալու ժամանակ նոցա մարմնաւոր կերակուրը զանց չէր առներ։ Փարիսեցւոց և մաքսա. ւորաց տուներ առ հասարակ կը մտնէր, նոցա աշխարհային խնջոյքներին կը մասնակցէր և նոցա տրտմութեան ժամանակի ինքն եւս կը տրտմէր և կը համակրէր։ Ի կանա Գալիլեացւոց հարսանեաց մէջ իւր ամենառատ նուէրովն կ'օրէնէ զհարսանիսն և կը հիացնէ զհանդիսականնն՝ զլուրն 'ի գինի փոխելով. Նայինայ այրւոյն ողբումն իւր միամօր որդւոյն մահուան համար, Մարիամայ և Մարթայի արասառուքն իւրեանց եղբօր վերայ, Փրկչի գութը կը շարժէ, որ նոցա տրտմութիւնն յուրախութիւն կը փոխէ վերակենդանացնելով նոցա սիրելիներն. Թիերեւս հրէական հայրենասիրութեամբ իմն նախ կը մերժէ զլամարուհին, այլ կնոջ հովուասէր փաստաբանութեամբն զգածուելով՝ կ'օգնէ, կ'ողորմի։

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆՆ Է ԱՇԽԱՐՀԻՍ ԲՈԼՈՐ
ՊԱՐԱԳԱՅՆԵՐՆ ՄՐԲԵԼ ԵՒ ԱԶՆՈՒԱՑՆԵԼ,
ԵՒ ՈՉ ԹԷ ՚Ի ԲԱՑ ՄԵՐԺԵԼ

Ոմանք Քրիստոսի անջատ խօսքերէն ուղեցին եղ-
րակացնել թէ՝ կատարեալ քրիստոնեայն պէտք է աշ-
խարհիս դէմ իւր աշքերը գոցէ և ապրի, իբր թէ աշ-
խարհէս դուրս կ'ապրի, Հաւանօրէն այս սխալ ըմբռո-
նումը տեղիք տուած է՝ ‘աշխարհական’ բառի գործա-
ծութեան մեր մէջ իբր թէ աշխարհականն նուազ հո-
գեւոր լինելու պարտի քան զ՝ հոգեւորական’ կոչ-
ուածն, և այս վերջինը նուազ աշխարհական լինելու
է քան ‘աշխարհական’ կոչուածն։

Քրիստոսի քարոզութիւն աշխարհի չարեաց դէմ էր
և ոչ թէ աշխարհի ամբողջութեան որ ըստ ինքեան բարի
է, քանի որ Աստուծոյ ստեղծուած է, և քանի որ «այն-
պէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զՊրդին իւր
միածին ետ»՝ Քրիստոսի ամբողջ քարոզութիւն ու երկ-
նաւոր կեանք յայտնի ապացոյց են այս աստուածային
սիրոյ, Նորա գալստեան նպատակն էր աշխարհիս բոլոր
պարագայներ և հաստատութիւններ ազնուացնել և
սրբացնել, ոչ թէ խոտել և ՚ի սպառ ՚ի բաց մերժել, իւր
առակաց մէջ աշխարհիս բոլոր գործերէ և զբաղում-
երէ անխտրաբար օրինակ կը բերէ։ Այդեգործ, պար-
տեղպան, սերմանահան, ակնավաճառ, ձկնորս, մաք-
սաւոր, մեծատուն վաճառական, դատաւոր, փաստա-
բան, թագաւորք և իշխանք, զօրք և զօրավարք, աշ-
խարհիս զբօսանքներ ու հաճոյքներ, հարսանիք, հաց-
կերոյթ, ուղեւորութիւն, պատերազմ և շատ ուրիշ
պարագայներ, որոց իւրաքանչիւր մին իւր օրինաւոր
տեղն ունի Ս. Աւետարանի մէջ։ Եւ Քրիստոս եկաւ ոչ

թէ աշխարհն մի մեծ անապատ դարձնելու, և խստա-
կեաց ու աշխարհուրաց կրօնաւորներով լցնելու, այլ աշ-
խարհիս բոլոր պարագայներն չարաչար գործածութենէ
մաքրելով՝ ազնուացնելու և օրհնելու համար։ վասն զի
երկնից արքայութիւն ժառանգելու պայմանն է այս աշ-
խարհի վերայ ապրելով հանդերձ, չարիքներով ու փոր-
ձառութեամբք շրջապատեալ լինելով հանդերձ, չարը
մերժել ու բարին ընտրել, «զբարւոք պատերազմ պա-
տերազմել, զընթացսն կատարել զհաւատսն պահել։»

Աստուծածային իմաստութիւնը կը պահանջէ որ մեր
երկնաւոր և աշխարհային պարտքը լիովին կատարելով՝
տամբք զկայսերն կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ։»

Ս. ԵԿԵՂԵՑԻՆ ՄԻՇՏ ՀԵՏԵՒԱԾ Է ԱՅՍ ՏԷՐՈՒԽԱԿԱՆ ՕՐԻՆԱԿԻՆ

Քրիստոսի այս համաշխարհական օրինակին հետե-
ւեցաւ Ս. Եկեղեցին որ իւր քաղաքակրթիչ և ազնուա-
ցուցիչ հովանին տարածեց աշխարհի բոլոր պարագա-
յից վերայ, մաքրելով զայնս հեթանոսական մոլորու-
թիւններէ և զեղծումներէ, և քաղաքակրթութիւնը
հաստատուն հիմանց վերայ դնելով, որ հաստատուն է
որքան ժամանակ Ս. Աւետարանի ոգւոյն համեմատ
կ'ընթանայ այդ քաղաքակրթութիւն։ Եւրոպիոյ լու-
սաւորութիւն անտարակոյս քրիստոնէութեան ար-
դիւնքն է. թէպէտեւ եւրոպական ազգերէն ոմանք
այդ ճշմարտութիւն խոստովանիլ չուզեն, իրողութիւ-
նը անուրանալի է. և եթէ այս նոր քաղաքակրթու-
թեան մէջ թերութիւններ կան, նոքա Աւետարանի
գծեալ ճանապարհէն շեղելուն պէտք է վերագրել։

Հայստաննեայց Եկեղեցին եւս իբրեւ Քրիստոսի
Եկեղեցւոյ մէկ հարազատ ճիւղն՝ իւր ազգեցութիւն

տարածած է իւր խնամոց յանձնեալ Հայ ազգին վերայ: Իւր հաստատութեան առաջին օրէն իսկ մեր ազդի լուսաւորութեան և բարօրութեան համար միջոցներ գործ գրաւ. և անտանելի թշուառութեանց ներքոյ և անօրինակ դժբախտութեան ենթարկեալ Հայ ազգը իւր պահապան թեւոց տակ կազդուրեց և զօրացոյց, բնաջինջ լինելէ աղատեց, և վերակենդանութեան նոր ոյժ ու զօրութիւն տուաւ նմա:

Հայոց ազգի՝ քրիստոնէութենէ յառաջ ունեցած քաղաքակրթութեան սահմանն ու աստիճանն ըստ մեծի մասին խաւարի մէջ և ենթադրութեանց վերայ հիմնեալ են: Արդէն քաջ գիտենք որ մինչեւ Ս. Աւետարանի 'ի Հայս ընդհանուր տարածութեան ժամանակ, տակաւին ոչ գիր ունէինք ոչ գրականութիւն, և մեր հնագոյն պատմագիրք քրիստոնէութենէ յառաջ շատ բան չունին պատմելու:

Այեն շրջահայեաց քրիստոնեայ պարտի բացարձակ խոստովանիլ որ եթէ մեր ազգի համար լաւագոյն օրեր երեւակայել կարելի է, այդ միայն Հայաստանեայց Եկեղեցւոյ շնորհիւ յուսալի է: Ուրեմն այս զգալի տեսակէտով եւս կրկին անդամ ճշմարիտ է ինչ որ 'ի վերոյ ասացի թէ՝ «Հայու համար արտաքոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ չիք փրկութիւն:»

ՍԷՐ ԱՆՁԻՆ ԿԱՍ «ԱՆՁՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ»

ՅԱՑԱԽ ՀԻՄՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒԹԵԱՆ

Տէրունական պատուիրանը «Սիրեսցես զընկեր քո իրեւ զանձն քո» նախ և յառաջ կ'ենթադրէ սէր անձին կամ անձնասիրութիւն, որոյ չափով ու կշռով կը պահանջուի որ մեր ընկերն եւս սիրենք: Անձնութեան

րութեան և անձնուրացութեան քարոզներ խիստ յաճախ կը խօսուին, այլ դուն ուրեք կը լսուի անձնասիրութեան քարոզ:

Ընկերը սիրելէն յառաջ, զմել՝ մեր անձերը արժանաւորապէս սիրելու պէտք ունիմք. նախապէս անձնասիրութեան սահմանը ճանաչել պարտիմք որպէս զի կարենամք ըստ այնմ սիրել նաեւ մեր ընկերն: Նատ անգամ երբ մեր պարտքը կը կատարեմք, կը կարծեմք թէ անձնուիրութիւն կը գործեմք. ո՛չ, այդ օրինաւոր անձնասիրութիւն է, զոր մեր Փրկին եւս կը հաստատէ ասելով. «Յորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասասջիք թէ ծառայք անպիտանք եմք, զոր պարտ էաքն տունել՝ արարաք:»

Մեր կեանքը Աւետարանի օրինաց համեմատ ուղղել, առաքինութեան հետեւիլ, մոլութենէ խորշիլ, այս ամենը կը գործէ այն մարդն որ իւր անձն կը սիրէ և կը յարգէ և կը պատուէ: Գիտենք թէ ինչ կը նշանակէ պատուաւոր և անպատիւ, ազնիւ և անազնիւ լինելն. երկումն եւս նախ և յառաջ անձին կը պատկանին, մին անձը սիրելէ և միւմն անձն չը սիրելէ յառաջ կը գայ: Օրինակի համար, մի առեւտրական կամ արհեստաւոր կամ որեւէ մի պաշտօնեայ իւր գործն ու պաշտօնն արդարութեամք և ճշգութեամք վարելով՝ ոչ այլ ինչ գործած կը լինի բայց եթէ ինքզինքը սիրած, և ոչ աւելի և ոչ պակաս քան թէ իւր սոսկական պարտքը կատարած կը լինի: Խոկ ստախօս և անարդար մարդն, արդարեւ իւր ընկերին եւս կը վնասէ, բայց առաւել եւս ինքզինքը կը վնասէ, քանի որ մեղաց անձնատուր լինելով՝ իւր անձին պատիւ ոտնակոխ կ'անէ ամենէն անաշառ գատաւորի, այսինքն, իւր խղճի առջեւ:

Երբեմն կը լսուի թէ աշխարհային գործոց մէջ անկարելի է կատարեալ ճշգութեամք և արդարութեամք ընթանալ. գործը վնաս կը կրէ (այսինքն, անարդար

շահը կը պակասի) եթէ ամեն պարագային ճշմարիտը խօսելու, ուղիղ վարուելու լինիմք։ Նոյն իսկ պարզ նիւթական շահու տեսակէտով այս դրութիւն ուղիղ չէ։ յիշենք միայն անգլիական առածը թէ «Honesty is the best policy» (Հաւատարմութիւն կամ ուղղամտութիւն լաւագոյն քաղաքականութիւնն է)։ Սակայն աւելի մեծ է խղճի և քրիստոնէական անձնասիրութեան և ընկերութեան դէմ գործած յանցանքն, որով սակաւ ինչ նիւթական շահու կամ առաւելութեան համար, որ թերեւս կարելի լինի մեղ այլապէս եւս յաջողիլ ձեռք բերել, մեր հոգւոց պայծառութիւնը կը նսեմացնեմք, մեր անձն ու խիղճը կանարգեմք, մեր ընկերին կը վնասենք, մեր կրօնի և ազգի անուն ու պատիւ կ'արատաւորենք, և մեր յաւիտենական առումարի մէջ սեւ արձանագրութիւն կը թողումք։

Անխիղճ քրիստոնէի ընթացքն ոչ թէ միայն իւր անձին և իւր ընկերին կը վնասէ, այլ նաեւ այն Ս. կրօնին զոր նա կը խոստովանի, «Զի անուն Աստուծոյ վասն ձեր հայրոյի 'ի մէջ հեթանոսաց։» Երբ թերահաւատ կամ անհաւատ մարդիկ կը տեսնեն որ քրիստոնեայ անուն կրող մի մարդ անհաւատարիմ և մոլի է, նոքա անմիջապէս քրիստոնէութեան կը վերագրեն այդ ամենը և կասեն. «այդ է քո քրիստոնէութիւն.» և փոխանակ այդ քրիստոնէայէն բարի օրինակ տեսնելով մեր երկնային կրօնի ճշմարտութեան հաւատալու և դառնալու 'ի լոյս Աւետարանի, նորա յոռի ընթացքէն կը դայթակղին, և նոցա սիրտեր քրիստոնէութեան դէմ առաւել եւս կը կարծրանայ։ Կամ երբ օտարազգին հայու յոռի ընթացքը կը տեսնէ, նա ընդհանրապէս այդ ընթացք նորա կրօնական և ազգային սեփական ոգւոյն կը վերագրէ, և այսպէսով յաճախ կ'արատաւորի մեր ազգութիւն և Հայաստանեայց Ե-

կեղեցի, որ պէտք է միշտ փայլի և լուսաւորէ իբրեւ «լոյս առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս մեր բարիս և փառաւորեացեն զհայր մեր որ յերկինս է։»

ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Քրիստոնէական ընկերութեան զգացումն ամենէն աւելի զօրաւոր կերպիւ յերեւան կը գայ ազգամիրութեան մէջ։ Ազգն ընկերութեան ամբողջութիւնն է զոր քրիստոնեայն պարտի սիրել այնպիսի բազմապատիկ սիրով որքան բազում են այդ ազգի անհատք։ Զէ՞ որ մեր Փրկիչն եւս կը յանձնարարէր իւր հրեայ աշակերտաց՝ իւրեանց սիրոյ նուերներ մատուցանել նախ հայրենի ժողովրդեան և երթալ «առաւել առ ոչխարսն կորուսեալս տանն իորպէլի։» Ապա ուրեմն մինչդեռ մենք մեր առանձին շահերու վերայ կը խորհինք, պարտինք այնպէս խորհիլ թէ ի՞նչպէս մեր ազգի և եկեղեցւոյ ընդհանուր շահուց կը համաձայնին։ Մեր աշխարհային կոչում և զբաղում այնպէս ընտրելու ենք որ համաձայնի ազգին և Եկեղեցւոյ ընդհանուր շահուց։

Եկեղեցին, փոխադարձաբար, սիրոյ հետաքրքրութեամբ կը գիտէ՝ իւր ժողովրդեան նոյն իսկ աշխարհային յառաջդիմութիւնն, և կ'աղօթէ վասն առաւել յաջողութեան նոցին։ Քանզի որքան որ իւր նպատակ հոգեւոր է, դարձեալ նա չի կարող անտես առնել այն իրողութիւն, որ նոյն իսկ այդ հոգեւոր յառաջդիմութեան մեծապէս կը ծառայէ «Մամնայն անիրաւութեան», զոր Տէրն մեր կը յանձնարարէ իսկ ասելով՝ «Արարէք ձեզ բարեկամն 'ի մամնայէ անիրաւութեան», եթէ Քրիստոսի ժամանակ այս այսպէս էր, ո՞րքան առաւել մեր ներկայ նիւթականացեալ դարու մէջ, երբ

ամեն ինչ մամոնայի վերայ կը դառնայ։ Սակայն քրիստոնէի համար տարբերութիւնը սա պէտք է լինի, որ մենք ոչ թէ պիտի մամոնային ծառայենք, — « Զի ոչ ոք կարէ Աստուծոյ եւ մամոնայի ծառայել » — այլ զմամոնայն պէտք է մեղ ծառայեցնեմք։ Ուրեմն պէտք է մի այնպիսի աշխարհային կոչում ընտրել թէ մեղ եւ թէ մեր զաւակաց համար, որ մեր կրօնական եւ ազգային ամբողջութիւնը պահպանելուն որևէ է իւիք արգելք չը լինի, այլ ըստ կարելոյն այդ ամբողջութիւնը առաւել եւս զօրացնելու եւ կեդրոնացնելու նպաստէ։

Որքան որ ՚ի բուն հայրենիս գտնուող ազգայնոց համար յարմարագոյն կը համարուին երկրի մշակութիւն և այնպիսի զբաղումներ որ մի երկրի բնիկ ժողովը դեան կը վերաբերին, սակայն հայրենիքն հեռացեալ և մանաւանդ եւրոպական երկրաց մէջ գտնուող գաղթական հայոց համար աւելի նպաստաւոր համարուած է յիրաւի առեւտուրն, վասն զի առեւտուրի պարապումն ուրիշ զբաղումներէ և պաշտօններէ աւելի կը պաշտպանէ ազգային և կրօնական միութեան ոգին օտարանալէ, կամ մի մեծ ազգի մէջ խառնուելով կորուելէ։ Ուրախալի է որ այս մասին մեր գաղթական հայեր ՚ի սփիւռս աշխարհի շատ խրատի պէտք չունին, ամենէն նուազ Մանչէսթրի հայք նոքա ընդհանրապէս իրենց բնական ձիրքերուն կը հետեւին, եւ եթէ երբէք երկիւղ կայ, այն եւս նոր սերունդի համար է։ Փորձուած իրողութիւն է որ երբ մի ծառ օտար հողի վերայ կը փոխագրուի, նա կը ջանայ ըստ կարի այդ օտար հողի և կիմայի հանգամանաց համակերպիլ և այնպէս պաղաքերել։ Մեր ազգի նոր սերունդն եւս գաղթականութեան մէջ այս համակերպելու միտումն ունի, Հնդկաստանի հայեր, քանի որ առեւտուրով կը պարապէին, վերին աստիճանի ազգասէր և եկեղեցա-

սէր ժողովուրդ մի էին։ Եկեղեցիք, գպրոցներ, տպարաններ, հայ լրագրութիւն (առաջին հայ լրագիրը Հնդկաց Մադրաս քաղաքի մէջ հրատարակեցաւ), երեւելի գրագէտներ, բազմաթիւ ընտիր և պիտանի հրատարակութիւք եւայլն ։ մինչեւ իսկ հայրենեաց բնագաւառի համար մեծամեծ և յանդուգն բարիքներ կը խորհէին։ Ա. Էջմիածնի, Ա. Երուսաղէմի որպէս և Մխիթարեան միաբանութեանց մեծամեծ նուերներ տալով կը քաջալերէին յուսումն մտնկաւոյ ազգիս և 'ի պայծառութիւն Եկեղեցւոյ, Այլ երբ հին սերունդն անցաւ, և Անգլիոյ և անգլիական գպրոցաց մէջ ուսում առած նոր սերունդն — որ ամեն ինչ սորված էր բացի իւր մայրենի լեզուէն — յաջորդեց, և առեւտուրն անպատշաճ համարելով իւր ստացած անգլիական կը թութեան, ձգեց այլ եւս իւր հայրենի զբաղում և ընդ նմին իւր հայրենի սէր Եկեղեցւոյ և ազգի։

Մինչեւ ցայսօր Հնդկաստանի մէջ կը գտնուին հայազգի բարձրաստիճան պետական պաշտօնեայնէր, երեւելի փաստաբաններ, բժիշկներ և այլ այսպիսիներ որ մեր ազգին մեծ պարծանք ու պատիւ կը բերեն։ բայց, աւաղ, չոր ու ցամաք պարծանք որ ազգի ներքին կենաց և նորա լրութեան համար որեւէ իրական օգուտ չունի։ — Հնդկահայոց նման ուրիշ հայկական գաղթականութիւնք եւս իւրեանց ազգութեան և Եկեղեցասիրութեան զգացում կորուսեր են գլխաւորաբար իւրեանց հայրենի սովորութեանց և բնատուր կոչման չը հետեւ աղագաւ։ Լաւ է որ այսպիսի տխուր օրինակներ մեր առջեւ պահելով մեծ զգուշութեամբ կրթենք մեր զաւակներ, և այլոց սխալներէն օգտակար և պիտանի խրատներ առնումք։

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴՆ ԵՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ

ԿՐԹՈՒԹԻՒՆ

Այսու ամենայնիւ չեմ ուղեր գիտութեանց և արուեստից այլեւայլ ճիւղերը գատապարտել. և եթէ վասահութիւն ունենայի որ մեր գաղթական ժողովը դեան զաւակունք մայրենի լեզուի և Հայաստանեայց եկեղեցւոյ վերաբերեալ գիտելեաց հիմունքն ի մանկութենէ պիտի դնեն, այնպէս որ ապագային այլ եւս որեւէ վտանգի դուռ բաց չը մնայ, կը յանձնարարէի, մինչեւ իսկ նախամեծար կը համարէի, արուեստից և գիտութեանց ճիւղերը քան զգործնական վաճառականութիւն. Այլ որովհետեւ գիտեմ որ եթէ փայլին այդ ճիւղերու մէջ, յօգուտ օտարաց և առաջի օտարաց պիտի փայլին, քանի որ իւրեանց մտաւոր զարգացման և առաւելութեան հետ մէկ տեղ՝ իւրեանց հայրենի ժողովրդան և ազգին օդտակար լինելու յատկութիւններէն զուրկ են, և շատ հաւանական չէ որ նոքա ձեռնարկեն կամ յաջողութեամբ սովորին ինչ որ մանկութեան տիոց մէջ պիտի սորված լինէին:

Սակայն խնդիրը կը տարբերի այն երիտասարդաց համար որք յԵւրոպա ծնած չեն, այլ իւրեանց հայրենեաց մէջ ազգային կրթութեան և ազգային կրօնասիրութեան հիմունքն արդէն դրած են: յդպէսներու համար կասեմ՝ մեղք է որ առեւտուրով ժամավաճառ լինին՝ եթէ այլապէս իւրեանց ապրուստ ապահովեալ է: նոքա պէտք է բոլոր ուժով աշխատին հայ ազգին ներկայացնել կամ հայացնել այն մեծամեծ յառաջդիմութիւններ որոց վերայ հիմնեալ է Եւրոպիոյ քաղաքակրթութիւն: նոքա կոչուած են իննեւտասաներորդ գարու մէջ նոյն դերը կատարել մեր ազգի համար ինչ

որ հինգերորդ և վեցերորդ գարուց մէջ կատարեցին մեր երանաշնորհ թարգմանիչք:

Գրչի գործածութիւն որքան ազգեցիկ և զօրաւոր է տեղ տեղ, նոյնքան պատասխանատու պաշտօն մի է որ մեծ խոհեմութիւն և իմաստութիւն որպէս և ազգասիրութիւն կը պահանջէ գործածողէն: Գրագէտն ամենէն յառաջ իւր ընթերցողաց պէտքերն և օգուտն պարտի խորհիլ և ապա իւր անձնական հաճոյքն: Եւրոպական գրականութիւնը բաւականաչափ բարի որպէս և չար օրինակներ և ուղեցոյցներ դրած է մեր ուսումնական երիտասարդ գաղթականաց առջեւ: Մեծ իմաստութեամբ պէտք փնտուեն բարին և զայն միայն ներկայացնեն իւրեանց ազգի և Եկեղեցւոյ համեմատաբար անմեղ մանկանց, և ամենայն զգուշութեամբ խորշին այն ամեն բաներէ որ ազգի ամբողջութեան և կրօնասիրութեան ոգւոյն որեւէ վնաս կարէ պատճառել:

Այս էր մեր նախնի թարգմանչաց շաւիզն: Նոքա շատ քիչ գրեցին, այլ այդ քիչն իւրեանց մարմնոյ և արեան շափ իրականութիւն ունէր. իւրաքանչիւր բառնոցա սրտի խորերէն կը բղիէր և, աւելորդ է ասել, ընթերցողին եւս սրտի խորերը կը թափանցէր: Գրչով գործուած բարիքը, գէթ ներկայ դարու մէջ և ներկայ պարագայից ներքոյ, ամենէն աւելի ազգու և մնայուն բարեգործութիւնն է, և ընկերսիրութեան ամենամեծ արտայայտումն է, եթէ կարող ձեռքով և միանգամայն քրիստոնէական սիրոյ և Եկեղեցական օրինաց համեմատ գործ ածուի: Իսկ նորա չարաչար գործածութիւն, ընդ հակառակն, նոյնքան աւելի վնասակար և ընկերսիրութեան օրէնքէ հեռու է, և հետեւաբար պախարակելի և խոտելի է, որքան նորա բարւոք գործածութիւն գովելի և պատուոյ արժանի է:

Խօսքս ոչ թէ միայն վերացական կամ բանաստեղծական գրականութեան վերայ է, այլ առաւելապէս

պիտանի արհեստից և գործնական գիտելեաց գրականութիւնն է, յորում մեր ազգն այժմ կը կարօտի: Հողագործութիւն, մեքենագործութեան բազմաթիւ ճիշդերն, տարրաբանութիւն, բժշկութիւն և այլ այսպիսի առարկայից գիտութիւն նախ հիմնապէս ձեռք բերել և ապա հաղորդել մեր բազմակարօտ ազգին՝ տէրունական ընկերութեան օրինաց աստուածահաճոյ կատարումն պիտի համարուի, և Ս. Եկեղեցւոյն եւս անուղղակի կերպիւ ծառայութիւն մատուցած կը լինիմք:

Համառօա լինելու բոլոր ջանքովս հանդերձ, թուղթս իմ ակնկալեալ սահմանէն անցաւ: Բայց յուսամ թէ կարողացայ փոքր ՚ի շատէ յիշեցուցանել Սիրելի Ընթերցողացդ ինչ որ յաճախ և այլեւայլ կերպերող քարողած եմ Ս. Եկեղեցւոյ բեմէն: Տայէ Տէր որ Երկնից Արքայութեան սերմերն, որոյ ամենայետին մշակ կարգուած եմ, օրըստօրէ արմատանայ Եկեղեցւոյ մանկանց սրտերի մէջ, և առաքինութեան առատ ու քաղցրահամ պտուղներ բերէ ՚ի փառս Ամենակալին և ՚ի պարծանս Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Որով Մնամ Հոգեւոր սիրով եւ օհնութեամբ
Սիրելեացդ իմոց ի Քրիստո, Աղօթարաց ծառայ

Թ. ՔԼ. Տ. ԻՍԱԶԱԿԵԱՆ

Հ Օ Գ Ե Խ Ո Ր Հ Օ Վ Ի Ւ

Ա. Դրան Ս. Հոգի Եկեղեցւոյ

Հայոց, ի Մանչէստ

ի Տօնի Համբարձման Տեսոն 1899

Թաճ. — Թղթոյս հրատակութիւն՝ պատճառաւ իւիք մի բանի օրուացաւ:



3778



